

Գիրքը լուսապատճենահանվել է  
"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ Շերկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրք կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

library

ԴԱԼԻ ԱԼԻՎՈՒ ԿՈՂՈ, ԵՎ ՅԵՐ ՆԵՐՈՒՄ ԼԻՇԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱՎԱԼԽԵՅԱ ՏՐՈՅՈՒԹՅԱ ԳՈՐԾՈՒ ԵՎ, ԽԵՆԵՐԴ,  
ԸՆԴՊՈՅՑՔՎԱԾՈՒԵ, ԳՐԵՐ:

ԲՆԱԿ ԳՐԵՐԻ ԽԵՂՈՄՈՒ ՄԱԼԻՎԱՆԱԼԵԾ ԿՈՂՈ ԵՎ  
ԽՈՎՈԾ, "ՅՈՒՆԵՎԵՆԻԿԱՆ ԽԵՎՈՅՈՎԵՆ ԳՈՐԾՈՒ" ԿՈՎԱՆ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)


ԾԱԼԳՅԱԿՈՒ ԵՎ, ՈՐ ՕԳՏԱԼԻՇ Ե՞Զ ՄԵՐ ԿՈՎԱՆՈՒ:  
ՅԵՎԿՈՎՈՒՄ ԵՎ ՀՈԽԵՐԻ ԸՆԴԳՐԱՆՆԵՐՈՒՆ:



ԳՐԵՐ ՄԵՐ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

Գ.Ա. Գևորգյան

ԴԻՅԱՐԱԿԱՆ  
ՄԵԼԻՒՄԵՐԻ Եւ ԴՐՉԱՌԵՐԻ  
ՀԱՄԱՓՈՏ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ  
ԲԱԺԱՐԸ



[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

**Գ. Մ. ԳԱԼՈՅՅԱՆ**

**ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆԵՐԻ  
ԵՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՊՈՏ  
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ**

**«ԼՈՒՅՍ»**

**ՀՐԱՏԱՐԱԿ ԶՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ—1966 թ**

Г М ГАЛСТЯН  
Краткий объяснительный словарь  
мифологических названий и оборотов  
(на армянском языке)  
*Издательство*  
*„Луис“*  
Ереван, 1966 г.

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ գրականությունը դեռ վաղ ժամանակներից փոխառել ու կործածել է հունական, հռոմեական, երրայական, և ստու կան, արաբական և այլ ազգերի դիցաբանական բառեր ու դարձվածքներ, որոնցից շատերը ստացել են փոխաբերական նշանակություն և գտել լայն գործածություն:

Դիցաբանական բառերի ու դարձվածքների մի զգալի խասը իր բուն էությամբ անծանոթ է մեր լայն հասարակայնությանը, հատկապես դպրոցական աշխատուղներին:

Մեր այս աշխատությամբ, նկատի ունենալով բուն դպրոցական գրականությունը, ի մի ենք հավաքել հայերենում օպտագործված դիցաբանական բառերն ու դարձվածքները, համառոտ կերպով նշել գրանց ծագման պատմությունը, որ լեզվից առաջանալը և ապա բացատրել բառի կամ դարձվածքի ուղղակի ու փոխաբերական առումներն ու գործածության բնագավայր՝ վկայված համապատասխան բնագրային օրինակներով:

Դիցաբանական բառերի և դարձվածքների բացաւ բական բառարանը որոշ շափով կրավարարի մեր դպրոցական աշխատների պահանջը և կլրացնի հաւ բառաբանագրության՝ արուստ ֆոնդի այդ բացը:

Աշխատությունը, որպես առաջին փորձ, կունենա իր թերությունները: Ամեն մի դիտողություն այդ թերությունների մասին շնորհակալությամբ կընգունվի:

## ՀԱՄԲՈՅՈՏԱԳՐԻ ԹՅԱՅԻՆ ՆԵՐ

1. ՀԵ — Հոմերոս Բլժական Երևան 1950թ (թարգմ Համազասպ Համբարձումյանի):
2. ՀՈ — Հոմերոս, Ոդիսական Երևան 1957թ (թարգմ Սիմ Ն Գրքաշարյանի):
3. Ա Հ — Մարտ Հարությունյանց Իացատրական բառզ/բք տալազգի բառերի ու դարձվածքների, որոնք գործածական են հայոց դրականության մեջ, Ալեքսանդրապոլ, 1912թ:
4. Ա Թ — Սիքայիլ Յ Բարթիկյան Հելլեն դիք, Աթենք 1936թ:
5. Ա Ճ — Ն Ճիվանյան Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական հատուկ անվանց, Կ Պալիս, 1879թ:
6. Ա Մ — Մտեփանոս Մալխասյանց Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944թ.:
7. Հողը — Հույն զրել բակներ Երևան 1956թ (թ բղմ Համազւ սպ Համբարձումյանի):
8. Գ. Մ — Մուրագան Գևորգ Մարզպետունի, Երևան 1939թ:
9. Վ. Փ — Վահրամ Փախազյան Հետազարձ հայացք, Եւ Ա հատոր Երևան, 1956-1957թթ:
10. Վ. Տ — Վահան Տերյան Բանաստեղծությունների լիակատար ժողովածու, Երևան 1940թ:
11. Ե Զ — Եղիշե Զարենց Ընտիկ Երկեր Երևան 1954թ:
12. Ո. Պ. — Ուստիայե Պատկանյան, Երկեր, Երևան 1955թ.:
13. Մ. Ե. — Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար Խողովածու, Ե Ե, 1945թ:
14. Վ. Զ — Նաիրի Զայյան, Միհամոլյակ, Երևան 1959թ
15. Գ. Վ — Դանիել Վարուժան, Երկեր Երևան, 1946թ.:
16. Մ. Ը — Միֆологический словарь, Ленинград 1959 г.
17. Է. Ը — Էնциклопедический словарь Москва 1953 г.

## Ա

**ԱԲԴԵՐՈՍ,** Հուն., — Հերմեսի որդին, Հերակլեսի սիրելի ընկերը։ Հերակլեսը վերցրեց Դիումեպի մարդակեր նժույզները և նրանց պահպանությունը հանձնեց սիրելի Աբդերոսին, որին, առկայն, ձիերը պատառութեցին «Նժույզների պահպանությունը հանձնեց իր սիրելի Աբդերոսին», Կուն 203։

**ԱԲՍԻՐՏՈՍ,** Հուն. — Մեղեայի եղբայրը, Կոլխիդա երկրի արքան, որին, ըստ դիցաբանության, իր գեղեցկության սկատճառով կոլխիդացիները անվանեցին Փաետոն (շողջողուն)։ «Ամենափառահեղ առարանքում աւպրում էր էյեթոսն իր կող հետ, իսկ մուտքում նրա որդին Աբսիրտոսը» Կուն, 329

**ԱԲՐԱՀԱՄ,** Երր., — Առաջին նախաստեղծ մարդը, երբայցոց նշանավոր նահապետի անունը, Հր Անառյան, «Անձնանունների բառարան»

**ԱԳԱՄԵԴԵՍ,** Հուն. — Ավգիասի դուստրը, որը, ըստ դիցաբանության, գիտեր երկրի վրա աճող ամեն գեղն ու դարմանը «Նրա կինն էր Ագամեդեսն», Հի 229

**ԱԳԱՄԵՄՆՈՆ,** Հուն. — Ատրեսի որդին, Ստքենեի արքան, գեղեցկուհի Հեղինեի ամուսինը։ «Իլիական»-ի գլխավոր հերոսներից մեկը, որ առաջնորդեց Հույներին տրոլական պատերազմում, բայց վատերազմի ավարտից հետո, Երբ առևն վերադարձավ, դարձավ իր մյուս կնոյ Կլիտեմնեստրայի խարդախունքի դոհը։ «Ագամեմնոն արքան, հունաց դաշնակցության գլխավետը, խլել էր Արիլեսից Բրիսեխս սիրուհուն», Մուսագի, Պ. Ա., 159

**ԱԳԱՍԹԵՐՆ,** Հուն., — Ճակատագրի մոլցաներից (աեւ մոլցանեւ) լեկը։ «Ճակատագրի Ագասֆերն եմ ես . ա, Վ. Փ., ի 77, 65։

**ԱԳԱՎԱ,** Հուն., — Կաղմոսի և Հարմոնիայի դուստրը,

**Հատ** դիցաբանության Ագավան հրաժարվեց ճանաշել Դիոսկուրոսի աստվածալին ծագումը և գաղարեց երկրապատել նրան։ Այդ պատճառով աստվածները նրան պատժեցին, Ա Ը

**ԱԳԵԼԱՅՈՍ**, հուն., — Պենելոպեի Ողիուսի կնոջ սեղեխներից (տարփածու) մեկը։ « Ագելայոսն աւալես ասաց »,  
ՀՈ, 308

**ԱԳԵՆՈՐ**, հուն., — Պոսեյդոնի որդին, Սնթենորի զավակը, Եվրոպայի հալլը։ Հատ դիցաբանության, Երբ Զեսը սուսանգեց Եվրոպալին, Ագենորն իր որդուն ուղարկեց քրոջ որոնելու, Ա Ը

**ԱԳԼԱՅԱ**, հուն., — Քարիտներից մեկը, Ա Ը (տես Էտիաներ)

**ԱԳԼԱԿՐԱ**, հուն., — Կեկրոպսի գուստրը։ Հատ հուսական դիցաբանության Աթենասը նրան մի փակ արկղ տվեց երկիրը տանելու սակալն Ագլավյան իլ քրոջ հետ միասին խախտեց Աթենասի պահանջը և բաշ արեց արկղը Դրա համար աւ տվածները քույրերին խելագար դարձրին, Ա Ը

**ԱԳՆԻ**, հնգկ., — Գեղեցկության աստվածուհի։ Հասկացվել է նաև որպես կրակի աստվածուհի։ « Հրի փոխվեցից ու Ագնի դարձար», Ե Զ, 244:

**ԱԳՈՐԱ**, հուն., — Այն վայրը, հրապարակը, ուր հին Հունաստանու ժողովրդական համար էր տեսի ունենում, Ձ Ը

**ԱԴԱՄ**, երբ., — Հատ երրայական ավանդության Աղամը համարվել է առաջին նախաստեղծ մարդը։ « Մանոթ եղել ենք խավար քառսի, որ հառաջ նույնիսկ, քան ծնունդ Աղամա», Հ Հովի., Ե 1, 373—374

**ԱԴԱՄԱՄՈՒԹ**, հաւ., — Արշալույսից առաջ տիրող դրությունը։ « Աղամամութը նոր էր սկսել. » , Վ Փ, Ե 1, 94.

**ԱԴՄԵՏԵ**, հուն., — Եվրիսթեսի գուստրը, Հերա աստվածուհու քրմուհին։ Հատ դիցաբանության Ադմետեի խընգրանքով Հերկուլեսը նրա համար բերեց Հիպոլիտեի գոտին։ « Ադմետեն ուզում է ունենալ. . Արես աստծու ընծանք, Կուն, 209

**ԱԴՄԵՏՈՍ**, հուն., — Թեսալիայի թագավորը, որի մոտ, ըստ դիցաբանության, Ապոլլոնը յուր մեղքերը քավելու համար 6

**8 տարի հովկություն արեց:** «Ապոլլոնն իր սիրելի Ազմետոսին  
օժտեց անհաղթելի ուժով. » , Կուն 44

**ԱԴՐՆԻՍ,** կ յ ո ւ ն .,— Կիպրոսի արքայի որդին, Աֆրո-  
դիտի սիրեկանը: Դիցաբանության մեջ հասկացվել է որպես  
բնության ծաղկման և հարության աստված: Ըստ դիցաբանու-  
թյան, երբ Ագոնիսը որսի ժամանակ խողվեց վարազի ժանիքից  
և մահացավ, Աֆրոդիտեի խնդրանքով Զեսը նրան ետ բերեց  
մեռիների աշխարհից: Ագոնիսին սիրում էր նաև Պերսեփոնեն՝  
բուսական աշխարհի ստովածուչին: Սլք դատճառով Զեսը  
ստիպված եղավ համաձայնէլ, որ տարվա կեսը Ագոնիսը մնա  
Հագեսում, իսկ մյուս կեսը երկրի վրա, քանի որ Պերսեփոնեն  
ապրում էր Հագեսում, իսկ Աֆրոդիտեն՝ Պառնասում: «Երբ  
Աֆրոդիտեն առավ Ագոնիսի մահվան լուրը, ինքը եկավ  
Կիպրոսի լեռները գտնելու սիրած պատանու դին», Կուն,  
72—73.

**ԱԴՐԱՍ** (Եղրաստես Ադրաստոս), հ ո ւ ն .,— Արգոսա-  
կան էրկրի արքան: Ըստ դիցաբանության Ադրաստը կազմա-  
կերպել է նեմեական խալսը, Մ. Ը. (տես ո նեմեական խաղեր)՝  
«Ալդ տարօրինակ ձին համար Արգոսի թագավոր Ադրաստոսին,  
որը մոտ գտնվել էր Պեղասը՝ թեավոր նժուլգը», Մ. Թ., 210.

**ԱԴՐԱՍԵՍ,** հ ո ւ ն .,— Պատժի և վրիժառության աստ-  
րիածուչի: Ըստ առասպելի հավերժաշարս Իդայի հետ Ամալֆիա-  
այծի կաթով կերակրել է փոքրիկ Զեսին: «Հավերժահայր»  
Ադրաստեան սնունդ էր տալիս փոքրիկ Զեսին» Կուն 22:

**ԱԵԴՐՆ,** հ ո ւ ն .,— Զետեսի կինը, էփեսոսի արքա  
Պանդարոսի դուստրը: Ըստ դիցաբանության Աեդոնը նախան-  
ձում էր Նիոբեին, որ նա ? դուստր ունի, իսկ ինքը միան մեկ  
որդի: Ճանկաղավ սպանել Նիոբեի աղջիկներից մեկին, բայց  
մթության մեջ թլուրիմացաբար սպանեց իր միան որդուն:  
Որդեսպան մոր վշտին և տանջանքներին սահման չկար: Աստ-  
վածները կարելցեցին նրան սոխակ դարձրին, որ միշտ ողբա-  
յուր որդու կորուստը: «Աեդոնը շէր կարող անվրդով նայել  
եիոբեի երջանկությանը», Կուն, 184

**ԱԹԱՄԱՍ,** հ ո ւ ն .,— Հողմերի աստված էոլոսի որդին,  
Եեփելեի ամուսինը: Ըստ առասպելի Աթամասը դավաճանեց

Նեփելեին և ամուսնացավ Իոյի Հետո՝ «Աթամասի սերունդ»  
ները գիտեին...», Կուն, 311

**ԱԹԵՆԱԾ,** Հուն.— Զեսի և Ուտիսի դուստրը. Ըստ  
աշասպելի Սետիսը շատ խելացի կին էր: Զեսը, երբ տեսավ,  
որ Սետիսը հղիացել է, վախեցավ, թե կծնվի իրենից խելացի ու  
քաջ զավակ և կտիրի գուհին Արդ պատճառով կուլ տվեց կնոջը:  
Լրանում էր կող հղիության շրջանը, որը և դավ էր պատճա-  
ռում Զեսին Հեփեստոսը՝ Զեսի որդին, Հոր հրամանով ճեղքեց  
Զեսի գլուխը, և հոր գանգից գուրս եկավ զինավառ Սթենասը:

Աթենասը համարվել է հավերժական կուսության, իմաս-  
տության և գիտության մարմնացում նա հնարեց գութանը և  
առօգկանց սովորեցրեց լծկաններ լծելու աշխատանքը: «Այդ  
զինավառության մէջ (Ռշտունյաց օրիորդը) նմանվում էր  
Աթենաս Պալլասին», Բաֆֆի, Աամիլի, 227:


**ԱԻԴ,** Հուն.— Քրանոսի և Հերայի որդին, Աանդարա-  
մետի աստվածը: Գեղարվեստի մեջ պատկերված է որպես սի-  
հղոր, Զեսի նման, տղամարդ՝

գահին նստած, ձեռքին զավա-  
դան, իսկ ոտքերի մոտ սովորա-  
բար նստած է դժոխքի պահա-  
պան շունը Կերպիրը:

**ԱԼԱՍՏՈՐ,** Հուն.— Զեսի  
և Հերայի որդին: Ըստ դիցա-  
բանության ճանաչվել է որպես  
Վրիժառության ոգի, հրեշ, հան-  
ցագործներին հետամուտ եղաղ,  
Հի 122

**ԱԼԲԻՌՆ,** Հուն.— Ծո-  
վերի աստված: Ըստ դիցաբա-  
նության մեծ աղետներ էր  
պատճառում ծովայիններին:  
«Այ դու, անաստված Ալբիոնի  
աստված», Վ. Փ., հ. 1, 129.

**ԱԼԵՔՍԱՆԴՐ,** Հուն.—  
Պարիսի կրկնակ անունը: «Հան-  
դկս եկավ Տրով (տրոյական) զորքից Ալեքսանդրը աստվածա-  
եերակ», Հի, 76:



Նկ. 1 Ալեք

**ԱԼԵՔՏՐԻՈՆ,** Հուն , — Արեսի համհարզը, Ըստ այսանդության մի անգամ Ալեքտրիոնը պահապան էլ կանգնած Արեսին և Աֆրոդիտեին, երբ նրանք վայելում էին իրենց սիրո գգվանքը, Քունը տարավ, և նա շկարողացավ նրանց հայտնել լույսի բացվելը: Ապոլոնը, որ ազդարարում է այգաբացը, տեսավ նրանց գրկախառնությունը և հայտնեց Հեփեստոսին Աֆրոդիտեի ամուսնուն: Հեփեստոսը սարդի ոստանի բարձկության ցանց սարքեց և նրանց մեջն առավ: Երբ Արեսը ազատ արձակվեց, ովատժեց Ալեքտրիոնին դարձրեց աքլոր, որ լուր տա աշխարհին ալգաբացը: «Արեսը իր հավատարիմ Հետեորդ Ալեքտրիոնին ողաճակ կղներ», Ս Բ 149

**ԱԼԹԵՄԵՆ,** Հուն , — Կրետական թագավոր Կատրեասի որդոն Ըստ ավանդության գուշակը ասել էր, որ թագավորը կմահանա իր որդու ձեռքով: Ալդ բանից վախեգած՝ թագավորը փախալ Ռոզոս կղզին Բաց Հետո, երբ թագավորն արդէն ծերացել էր և զնաց որդու հանձնելու թագավորությունը, կղզու բնակիչները կարծեցին եկողներն ավազակներ են և մարտի բռնվեցին նրանց Հետ: Այս կովում թագավորը սպանվեց լուր որդու Ալթեմենի ձեռքով, Ա Ը

**ԱԼԻԹԵՐՈՒ,** Հուն , — Ողիսեսի հավատարիմ ընկերը: Ըստ դիցաբանության գիտեր անցլալը ու գուշակում էր գալիքը: Խոսեց Ալիթերսը ծերունազարդ», ՀՊ , 339

**ԱԼԿԱԹՈՎՈՒ,** Հուն , — Էվսիտեսի որդին, Անքիզի փեսան Տրոյալի մեջ խիստ հոշակված մի փառավոր անձ: Շնազարկեց Հերոսասիրտ Ալկաթովսին», ՀԲ , 256

**ԱԼԿԱՆԴՐԵ,** եգիպտ , — Թերեի արքա Պոլիբոսի կինը, որ թանկարժեք ընծաներ տվեց Հեղինեին, ՀՊ 45

**ԱԼԿԻԴՈՍ,** Հուն , — Զեսի և Ալքմենեի որդին: Ըստ դիցաբանության Հետագալում դարձալ Հունաստանի հերոսներից մեծագույնը, որին Պիթա գուշակուհին Հերակլես անվանեց: «.. Զեսի որդին էր, որին ծնվելիս Ալկիդոս անունը տվեցին», Կուն 190

**ԱԼԿԻՄՈՍ,** Հուն , — Արեսի որդին, Աքիլեսի բարեկամը ՀԲ , 459

**ԱԼԿՄԵՈՆ,** Հուն , — Զեսի սիրուհին, Հերակլեսի մայրը: Ըստ դիցաբանության Զեսի և Ալկմեոնի կենակցումից ծնվեց

Հերակլեսը: «Դեկիքիքյան պատգամախոսը հաղթանակ գուշակեց էպիգոններին, ...եթե այդ արշավանքին մասնսկից լինի Արկմեռնը», Կուն, 623

ԱԼՏԱՐ, հուն., — Զոհարան: Հունական դիցաբանության մեջ պատկերվում է քարից կամ կավե հողից վեր բարձրացած հուշարձան, M.C.

ԱԼՏԵԱ, հուն., — Տես Մելագրոս:

ԱԼՓԵՌՈՒ, հուն., — Գետի աստված: «Եվ ժագել էր այն Արփեռս կոլվող գետից», Հի, 119: Ընդարձակ բացատրությունը տես՝ Արեբուսա բառի տակ:

ԱԼՔ<sup>1</sup>, արար., — Հավերժահարս, չրալին ոգի, Մ 2

ԱԼՔ<sup>2</sup>, պրս., — Խոասպելական գազան կանացի կերպարանքով, Մ Ս, «Հայերևն բացատրական խոաւահ»

ԱԼՔԵՍՏԵ (Ալքեստիդե), հուն., — Ճողքոսի արքա Պելիսի գուստրը: Հունական դիցաբանության մեջ պատմվում է, որ ճակատագրի մոյրաները (տես և մոյրա) Աղմէտոս արքալին ասել են, որ նա մահից կփրկվի և թե մահկան ժամին նրա փոխարեն մեկ ուրիշն իջնի Հաղեսի աշխարհը, Այս բանին համաձայն եղավ նրա կենր Ալքեստիդէն «Թանատոսը Հերակլեսին պարզեց Ալքեստիդէի կյանքը...», Կուն 206:

ԱԼՔԻՆՈՍ<sup>1</sup>, հուն., — Պոսեյդոն աստծու թոռը, ունաքիայի երկրի արքան: Ըստ ավանդության սրա մոտ մի քանի օրով հյուրընկալվեցին արգոնավորդները (տես և արգոնավորդներ): «Արյունահեղ մարտ կսկսվեր, և թե Ալքինոսը շրաժաներ թշնամիներին իրարից ...», Կուն, 342

ԱԼՔԻՆՈՍ<sup>2</sup>, հուն., — Ֆեակների (տես և փեակներ) երկրի արքան, որի մոտ, ըստ դիցաբանության, հյուրընկալվեց Ռդիսեսը հայրենիք վերադառնալիս: «Ռդիսեսը... առավել զարմացավ Ալքինոսի պաշտիք ճոխությամբ», Կուն, 519:

ԱԼՔԻՈՆԵ, հուն., — Եղոսի գուստրը լուսաստղի աստված Ֆոս Փորի կինը: Ըստ ավանդության ամուսնու ողատնառած վշտից թոշուն դարձավ: « Ճախրում է ծովի վրայով թոշուն դարձած Ալքիոնեն», Կուն 289:

ԱԼՔԻՈՆԵՎՈ, հուն., — Գիգանտ, որը, ըստ առասպելի, իր երկրում մահ շուներ: Երբ Հերակլեսը տեսավ, որ Ալքիոնեսը անմահ է իր երկրում, առանց հապաղելու նրան ուսց

գցեց և հեռու տարավ Պալենեից, որի սահմաններից դուրս  
մեռավ գիզանտը, « փալլատակեց . նետը և միրճվեց...  
Ալքիոնեսի կուրծքը», Կուն, 231

**ԱԼԵՎՈՍ**, Հուն ,— Պոսեյդոնի որդին, էփիալետեսի և  
Օտոսի հայրը Ըստ դրցաբանության էփիալետեսը և Օտոսը  
ցանկացան երկինք բարձրանալ, որ այնուղ արժանանան Ար-  
տեմիսի սիրուն, բայց նրանց նետահարեց Ապոլլոնը, և նրանց  
նողատակը մնաց տնկատար: «Տուժեց Արեսը, երբ որ նրա զույգ  
որդիներն Ալկոսին կաշկանդեցին կապանքներով», ՀԻ , 114:

**ԱԼՈՊԱ**, Հուն , Կերկեի դուստրը: Ըստ առասպելի  
Պոսեյդոնից ունեցավ մի տղա, որին ստիպված, որպես ըն-  
կեցիկի, դուրս նետեց Երբ Հովիվները գտան երեխային և  
բերեցին Ալոպալի հոր Կերկեի մոտ, Կերկեն հրամայեց մահա-  
ուղատժի ենթարկել նրան Բայց Պոսեյդոնը պահպանեց Ալո-  
պային և հոր հալածանքներից ազատելու համար նրան աղ-  
բյուր դարձրեց, Մ . C

**ԱԿԱՍԻ**, Հուն ,— Պելասի որդին: Ըստ առասպելի մաս-  
նակցեց արգոնավորդների (տես արգոնավորդներ) արշավան-  
դին Սեդեային և Յասոնին դավադրության համար հեռացրեց  
իր երկրից, Մ . C

**ԱԿԱՐՆԱՆ**, Հուն ,— Ալքմենեի որդին: Ըստ դիցաբա-  
նության Ալքմենեն աղերսեց Զեսին, որ իր որդիները շուտ  
մեծանան և առնեն հոր վրեժը: Այդպես էլ եղավ, Մ . C

**ԱԿԻՍ**, Հուն ,— Գետի աստված, Սիմեփեսի որդին: Ըստ  
առասպելի սիրում էր գեղանի Գալատեային, որին սիրում էր  
նաև կիկլոպ Պոլիփեմոսը: Կիկլոպը Գալատեային տիրելու  
համար վիրավորեց Ակիսին: Վիրավորված Ակիսի մարմնից  
սկսեց արյուն հոսել, որը հետո զուլավեց և դարձավ գետ: Այդ  
պատճառով գետի աստված անվանեցին: Ակիսի պատանին  
Ակիսն էր, որ գետային աստված էր դարձելո, Կուն, 300

**ԱԿԿԱ (Լորենցիա)**,— Հին իտալական աստվածուհի: Դի-  
ցաբանության մեջ հասկացվել է Հովիվ Ֆառատալի կինը:  
Ծնեց և դաստիրակեց 12 զավակ, Մ . C

**ԱԿՐԻՍՈՍ**, Հուն ,— Արգոս երկրի արքան: Ըստ ավան-  
դության Դանաւա անունով մի դուստր ուներ, որից Զեսը  
ունեցավ մի զավակ և անվանեց Պերսես: «Պատգամախոսը

**ԳՈւշակել** էր, որ Ակրիսոսը զոհ պիտի գնա Դանայաւի որդու ձեռքով», Կուն, 139

**ԱԿՏԵՌՆ** (Աքտեռն), Հուն., — Ըստ դիցաբանության որսորդ է. Որս անելիս Արտեմիսին տեսավ մերկ վիճակում, երբ վերջինս հավերժահարսերի հետ լոգանք էր ընդունում։ Արտեմիսը զայրացավ որսորդի այդ համարձակության վրա և նրան եղջերու դարձրեց։ «Յասումնալիք Արտեմիսը տարաբախուա Ակտեռնին եղջերու դարձրեց», Ս Բ, 137

**ԱՂԵԲՍ**, Հուն., — Զեսի դուստրը։ Դիցաբանության մէջ պատկերված է կաղ ոտքերով, խորշումադեմ, աշքերը շիլ ու խոնարհ։ Միշտ հալածել է Աղետին։ «Աղետը ու Աղերսը դստրիկներն էին հզոր Զեսի», ՀԻ, 187

**ԱՂԿԵՍԻԱ**, Հուն., — Պելիասի գեղեցիկ դուստրը, որին, ըստ դիցաբանության, սիրում էր Աղմետոսը։ «Աղմետոսը սիրահարված էր Պելիասի դստեր Աղիեստիսին», Ս Բ, 93

**ԱՂԿԻՌՆ**, Հուն., — Ծովային թռչուն, որն իր բույնը, ըստ առասպելի, հյուսում է ծովի ալիքների վրա։ «Կոհակ-ներու մեջ լողացող Աղկիռնին հանգունակ ան կլողա մատերուն երգերուն մեջ ներդաշնակ», Պ Վ, 274

**ԱՄԱԶՈՆ**, Հուն., — Միաստինք, սկատերազմասեր կանայք Ըստ դիցաբանության նրանք ոչնչացնում էին իրենց մանուկներին։ Դիցաբանության մեջ հասկացվել են որպես Արտեմիս աստվածուհու ուղեկիցներ, «Որպես մի կարմիր ամազոնուհի դու շեփորեցիր կորիվ ու պայքար», Ե Զ, 129

**ԱՄԱԼՓԵԱ**, Հուն., — Ըստ առասպելի աստվածային այն այժն էր, որի կաթով սնվեղ փոքրիկ Զեսը, «Աղրաստէան սնունդ էր տալիս փոքրիկ Զեսին Ամալփեա ալժի կաթով», Կուն, 22

**ԱՄԲՐՈՍ** (Ամբրոսիա), Հուն., — Աստվածների անմահական կերակուր։ Անուշահոտ բարատան, օծանելիք «Աստվածուհին սեղան բացեց նրա առաջ և ամբրոսիա ոցրեց նրա առաջ» ՀՈ., 67

**ԱՄԻԹՈՆ**, Հուն., — Տիրոնի որդին։ Ըստ դիցաբանության համարվել է առաջին ձիաբույժը։ «Այլ որդիներ ևս ծնեց սիրուն Տիրոն Կրեթոսից և ձիաբույժ Ամիթոննեն», ՀՈ., 152

**ԱՄԻԿ** Հուն. — Պոսեյդոնի որդին։ Ըստ առասպելի, երբ արգոնավորդները (տես աւգոնավորդներ) Ամիկի երկիրն

իջան, նա առաջարկեց ամենից ուժեղի հետ բռնցքամարտի բռնվել Արգոնավորդներից Պոլիգեքեսը ընդունեց մրցահրա վերը և մարտի ժամանակ սպանեց նրան, Ա. Ը.

**ԱՄՄՈՆ**, Հ ուն .,— Զեսի գուշակը, որի գուշակավայրը, ըստ դիցաբանության, զտնվում էր Լիրիական անապատի օազիսում: « Արքան դիմել էր Զեսի Ամմոն գուշակին», Կուն 146

**ԱՄՈՍ**, Ե գ ի պ տ .,— Պատերազմի աստված: Դիցաբանության մեջ սլատկերվել է մարդու կերպարանքով, բայց ոչխարի գլխով, Ա. Ը

**ԱՄՈՒՅ**, Հ ուն .,— Վեներայի որդին, սիրո աստված: «Իաց դիսլավ ինձ Ամուրի սլաքը», Ցո Երբաս, 9

**ԱՄՓԻԱՐԱ**, Հ ուն .,— Սդրաստեայի ամուսինը, արգոսական երկրի (տես Արգոս<sup>2</sup>) թագավորը, հայտնի գուշակ: Հստ դիցաբանության մասնակցեց արգոնավորդների (տես արգոնավարդներ) արշականքին, Ա. Ը

**ԱՄՓԻԼՈՔՈՍ**, Հ ուն .,— Ալքմինեի Էղքայրը: Հստ դիցաբանության շնորհալի կանխագուշակ էր, Ա. Ը.

**ԱՄՓԻՈՆ** ԵՎ ԶԵԹՈՍ, Հ ուն .,— Զեսի և Անտիոպեի որդիները: Հստ դիցաբանության Ամֆիոնը օժտված էր երաժշտական բնգունակություններով, իսկ Զեթոսը աշքի էր ընկնում իր ուժով: «Անտիոպեն ծնել է երկու որդի Ամֆիոնին ու Զեթոնին», ՀՊ 152: Ասվում է նաև, թե Ամֆիոնի երգերի կախարդիչ ազգեցության տակ ինքնին կառուցվել են թերե քաղաքի սրարիստները «Հու հնագանդ նրա ոսկելար կիթառի հնչյուն ներին՝ քարերն իրենք իրենց շարվում էին », Կուն 178

**ԱՄՓԻՏՐԻՈՆ**, Հ ուն .,— Հերակլեսի դաստիարակը: Հստ առասպելի իր խիզախության շնորհիվ կարողացավ արժանանալ Լիեկտրիոնի դստեր սիրուն: «Ամֆիտրիոն հերոսին հաջողվեց առանց կովի նախիրները ետ տալ...», Կուն, 187.

**ԱՄՓԻՏՐԻՏԵ** (Ամֆիտրիա), Հ ուն .,— Ծովերի աստվածուհի, Պոսեյդոնի կինը: Դիցաբանության մեջ Ամֆիտրիոն պատկերվել է նստած խխունջի մեջ, որին տանում են ծովային ձիերը կամ գելֆինները «Ամֆիտրիոնի ննջարանը համարվում էր: Հունաստանի ափերը ուսուզող էգեյան ծովը», Հոդք 371, Կուն, 272:

**ԱՅԱՍ,** Հուն, — Տեղամոնի որդին, Դիցաբանության մեջ ճանաշվել է Աքիլեսից հետո երկրորդ մեծ հերոսը հին Հունաստանում։ Այսան ինքնասպան եղավ, երբ Ռդիսեսին հանձնեցին Աքիլեսի զենքերը, որովհետև, ըստ ավանդության, Աքիլեսի զենքերը նրա մահից հետո պիտի տրվեին Այասին։ «Խորհրդական մեր քաջերից մեկը լինի թող նավապետ Ռդիսը, Իդոմենեսն կամ Ալասն անպարտելի»։», ՀԵ, 39

**ԱՅԾԵՂԶՑՈՒԹ,** Հայ, — Առասպելական կենդանի, Դիցաբանության մեջ պատկերված է այծի եղջյուրներով։ Զեսց նրան Պառնասից փոխադրեց երկինք իրեն հակառակելու պատճառով, Ս Ս :

**ԱՆԱՀԻՏ,** Արքուն, — Սստվածուհի, Արամազդի գուստրը, Ակոլոնի բույրը Դիցաբանության մեջ ճանաշվել է որպես

որսորդության աստվածու ի և ամենայն զգաստության մայր։ Աթենաս Պալլասի նման գուրս էր Ակել Արամազդի գանդից։ Անահիտ անունը համանիշ է Արտեմիս, Փերէ և Առողիկ անուններին։ Եվ կախարդական տաճարում կանգնած՝

Կուզեի տեսնել հա քեզ, Անահիտօ, Հ Հովին, և 1, 103։

**ԱՆԴՐՈԳՈՅՑ,** Հուն, — Կրետեի թագավոր Մինոսի և Պասիփայի որդին։ Ըստ

Դիցաբանության մարմնամարզական խաղերում մրցակից շուներ։ Հունաստանի էգես արքան տեսնելով, որ Անդրոգոյը անմրցակից է, արդախությամբ կործանեց նրան։ Այս արարքի համար Մինոսը պատերազմի դուրս եկավ Հունաստանի դեմ և պարտության մատնեց։ Պարտված Հունաստանը պարտավորվեց լուրաքանչյուր տարի Կրետե ուղարկել 7 աղջիկ, 7 տղա՝ որպես կեր Մինոտաուրոսին Դ Ը..

**ԱՆԴՐՈՄԱՔԵ,** Հուն, — Հեկտորի կինը, Թերէ քալա-



Նկ 1ա Մուհիմ

քի թագավոր էթիոնի դուստրը, Գրականության մեջ ճանաշվում է որպես ամուսնուն սիրող հավատարիմ կնոջ իդեալական կերպարանք, «Եռնեց Հեկտորի ձեռքը Անդրոմաքեն», Կուն 42.

**ԱՆԴՐՈՄԵԴԱ,** հուն .— Կեփես արքայի դուստրը, Դիցաբանության մեջ ճանաշվում է Հերազից ավելի գեղեցիկ։ Ըստ դիցաբանության Անդրոմեդայի մայրը հպարտանում է, որ իր դուստրը ավելի գեղեցիկ է, քան ներեխոները (տե՛ս ներեխոներ)։ Վերջիններս վիրավորված զգալով՝ խնդրեցին Պոսեյդոնին վրիժառու լինել։ Պոսեյդոնը Օրակու հրեշի միջոցով ամայացրեց նրանց երկիրը։ Պերսեսի շնորհիվ ազատվեց միայն Անդրոմեդան, «Նա ժայռի վրա գամված տեսավ գեղանի Անդրոմեդային», Կուն 146։

**ԱՆԹԵՅ (Անթեսս),** հուն .— Պոսեյդոնի և Գեայի որդին։ Ըստ դիցաբանության Հերկուլեսը շատ անդամ գետնեց Անթեյին, և այց վերջինու մնաց անհաղթելի։ քանի որ Գեան նրա մայրը, ուժ էր տալիս որդուն նրան հաղթելու համար Հերկուլեսը Անթեյին օդ բարձրացրեց և խեղդեց իր բազուկ նորի մեջ։ «Մեկ էլ հանկարծ, Հերկուլեսը գետնից պոկեց ու վեր բարձրացրեց Անթեսսին, սպառվեցին Գեայի որդու ուժերը և հերոսը խեղդամահ արագ նրան»։ Կուն 218

**ԱՆԹԵՅԱ,** հուն .— Պրոյտոս արքայի կինը։ Ըստ դիցաբանության Անթեյան գեղեցիկ էր, բայց գերվեց առավել գեղեցիկ Բելերե ֆոնի գեղեցկությամբ, երբ վերջինս հյուր եղավ նրանց մոտ։ Սակայն Բելերե ֆոնը մերժեց նրան հյուրընկալության սուրբ սովորությը շկեղելու համար։ «...Եվ հերոսի նկատմամբ ատելությամբ լցվեց Անթեյա թագուհին», Կուն, 155

**ԱՆԹԵՆՈՐ,** հուն .— Պրիամոսի մտերիմ ընկերը, քըրմուհի Թեանու ամուսինը։ Ըստ դիցաբանության ցանկացավ, որ խաղաղություն հաստատվի հունա-տրոյական բանակների միջև։ ԱՀետո դարձավ Հեղինեին ծեր Անթենորը խորամիան, չի 81

**ԱՆՆԱ ՊԵՐԵՆԱ,** լատ .— Իտալական հին աստվածուհի։ Հույները կարծում էին, թե Աննա Պերենան մարդկանց

**Երկարակեցություն, երջանկություն և առողջություն է շնորհում, Մ Ը**

**ԱՆՌՓԻՍ, Հ ուն ,— Եգիպտական աստված, Ռսիրիսի սրդին:**

**ԱՆՏԵԲՈՍ, Հ ուն ,— Աֆրոդիտեի սրդին, սիրո աստված, «Սակայն երբ իրմեն հեռացավ Անտերոս, իսկույն վերստացավ իր նախկին ձեզ», Ս Բ , 150**

**ԱՆՏԻԳՈՆԵ, Հ ուն ,— Էդիպ արքայի և Իոկաստրայի դուստրը, Ըստ առասպելի Անտիգոնեն շանսաց երկրի արքային և հողին հանձնեց իր եղբոր դին, Արքան Կրեոնը, այդ արարքի համար հրամայեց կենդանի թաղել Անտիգոնեին Հեմոնը արքայի որդին, ինդրեց հորը այդպես չվարվել իր հարսնացուի հետ, բայց հայրը լլաց նրան: Հեմոնը սրախողխող արեց իրեն և ընկավ անշնչացած Անտիգոնեի կողքին:**

«Ոչ մի համբավ սիրելեաց Խոսին դեռ ինձ, Անտիգոնե,

Ո՛չ ախորժ, ոչ վշտալից չէ հասել այն օրվանից »,

Հ Հովի, 6 1, 398

**ԱՆՏԻԼՈՔՈՍ, Հ ուն ,— Նեստորի որդին, Աքիլլեսի ընկերը, Ընկավ ծրոյայի մարտադաշտում և Նախ տապալվեց Անտիլոքը մեծ մարտիկը տրովադական», ՀԵ , 101**

**ԱՆՏԻՆՈՈՍ, Հ ուն ,— Պենելոպեի սեղեխներից (տարփածու) մեկը: Ըստ դիցաբանության Սնտինոսը նույնիսկ դլացավ մի կտոր հաց տալ «մուրացիկ» Ողիսնախն, երբ վերջինս որպես ծագոյակ մուրացիկ երևաց յուր տան սեմին: «Բոլոր տվին ողորմություն, մերժեց մեկը միայն՝ Անտինոսը», Կուն, 555**

**ԱՆՏԻԹՈՅԵ, Հ ուն ,— Գետի աստված Ասոպոսի դուստրը, ամազոնների թագուհին: Ըստ դիցաբանության պարծենում էր, որ Զեսից ունեցել է երկու որդի: «Ամուհետեւ ինձ երևաց Անտիոպեն Ասոպածին», ՀԵ , 152:**

**ԱՆՏԻՓՈՍ, Հ ուն ,— Պրիամոսի որդին, ՀԵ , 102**

**ԱՆՔԻԶ (Սնքիսես), Հ ուն ,— էնեասի հայրը, Աֆրոդիտե աստվածուհու ամուսինը, Դարդանական, երկրի արքան: «Անքիսեսը, լույսե զրկված առաջացած տարիքի մեջ էր որ պատահեցավ Տրոյայի պատերազմը», Մ Ը 154: Ըստ դիցաբանության Աֆրոդիտեն սիրո գաղանի հանդիպումներ էր**

ունենում Անքիսևսի հետ, բայց վերջինս շպահեց այդ գաղտնիքը և հայտնեց ուրիշներին։ Այդ արարքի համար Աֆրոդիտեն նրան կուրացրեց։

**ԱՇՏԱՐԱ,** չուն .— Աստվածուհի։ Հայկական դիցաբանության մեջ նմանեցվում է Անահիտ աստվածուհուն։ (Տե՛ս Անահիտ)։

**ԱՊԱՏԵ,** չուն .— Գիշեր աստվածուհու աղջիկը, խարեւության աստվածուհի։ Ըստ դիցաբանության, իբրև պատիժ Քրոնոսին, Գիշեր աստվածուհին ծնեց բազում աստվածություններ, որոնցից մեկն էր Ապատեն «Գիշերը ծնեց Ապատեին», Կուն, 20—21

**ԱՊԻՍ,** եզիպատ ,— Սրբադան եզ։ Դիցաբանության մեջ Հասկացվել է որպես երկրագործության աստված։ Ապիսը Մեսկիսի նվիրական եզն էր։ Նրա նշաններն էին բոլորովին սև գույն, սպիտակ եռանկյունի կամ քառակուսի բիծ ճակատին, սպիտակ, լուսաձև բիծ աջ կողքին, երկու տեսակ մաղերով գարդարված պոշ։ Նրա համար առանձին տաճար էր շինված, և քրմերը կերակուր էին մատուցում նրան ոսկե անոթներով։ Եթե սատկում էր, մինչև նոր Ապիսի գտնվելը ընդհանուր, ազգային սուր էր պահպում։ «Նա պաշտվում էր եգիսլուտացիների կողմից իբրև սպատկեր երկրագործության աստված Օպիրիսի»։ Մ 2

**ԱՊՈԼԼՈՆ,** չուն .— Զեսի և Լեթոյի որդին։ Ապոլլոնը և Արտեմիսը երկիրորյակներ էին Ըստ դիցաբանության՝ Ապոլլոնը սկզբում համարվել է հոտերի պահպանման աստված, հետո լույսի, արեի, արվեստի և երաժշտության Աստվածների մեջ ամենից գեղանին էր։ Նա էր հայտնում Զեսի կամքը աշխարհին։

Ապոլլոնը երիտասարդության գեղեցկության տիպարն էր օժտված տղամարդու հրապույրներով ու շնորհներով։

Տարբեր ազգերի մոտ տարբեր անուններ է կրել. ըստ լատինացիների՝ Փերոս, Ագիստացիների՝ Ռուբիս, պարսիկների՝ Միհր և Ակղբում Ապոլլոնը հոտերի պահպանման աստվածն էր։ Տ, Կուն 39

**ԱՌԻԲՈՆ,** չուն .— Սդրաստեսի աստվածազարմ, արագ ավագ ձին, Հի , 430։

**ԱՌՆԵՈՍ**, Հ ուն .,— Ըստ առասպելի ապրում էր Իթակեում և Հայտնի էր որպես անկուշտ մուրացիկ, երբ Ողիսնոր ծպտյալ, որպես մուրացիկ, շրջում էր իր տան շուրջը և քաժին խնդրում Պենելոպեի սեղեիների (տարիածուների) ճոխ սեղանից, այս մուրացիկը ծանակում է նրան և դուրս անում տնից: «Երբ ծնվել է, Առնեոս էր կոչել նրան», ՀԱ., 250.



Նկ 2 Սպոլլոն:

ոլդին, այն սիրասուն և քաջազուն Ասկալոպը. », ՀԲ , 286:

**ԱՍԿԼԵՊԻՈՍ**, Հ ուն .,— Ապոլլոնի որդին, առասպելական բժիշկ: Ըստ գիցարանության մեռնողին նույնիսկ հարություն էր տալիս: Պլուտոնի բողոքով Արամաղդը ոչնչացրեց նրան, Ապոլլոնը յուր վիշար սփոփիելու համար որդուն դասեց աստղերի համաստեղությունում և նրան անվանեց Օձակալ համաստեղություն, որով և օձը դիտվում է որպես բժիկության արվեստի նշան: «Իմաստուն Կենտավրոս Քիրոնը Ասկլեպիոսին դաստիարակել էր Պելիոնի լանջերին», Կուն, 49.

**ԱՍՈՊՈՍ**, Հ ուն .,— Գետի աստված: Ճիշերե քաղաքում ապրում էր գետի աստված Ասոպոսի դուստրը, Կուն, 176

**ԱՍՊԱԶԻԱ**, Հ ուն .,— Պերիկլեսի կինը: Գիցարանության մեջ ճանաչվել է որպես գեղեցկուհի և խելամիտ կին, Ձ. Ը. 1

**ԱՍՏԱՐՏԱ**, Հ ուն .,— Գեղեցկության, պտղաբերության, սիրո և ամուսնության աստվածուհի: Պիցարանության մեջ նույնաչվել է Աֆրոդիտեի հետ, Մ. Ը..

**ԱՍՏԵՐՈՊԵՈՍ**, Հուն., — Գեաի աստված Աքսիոսի որդին: 'Դիցաբանության մեջ ասվում է, որ սա մենամարտել է Աքիլլեսի հետ: «Աքիլլեսի գեմ խիղախեց դուրս գալ. Աստերոպեոս», Կուն, 460:

**ԱՍՏԻԱՆԱԿ**, Հուն., — Հեկառիի և Անդրոմաքեի որդին, որին Հեկտորը անվանում էր Սիրամանդերիկ, իսկ տրոյացիք՝ Աստիանակ, Հի., 140:

**ԱՍՏԻՈՔ**, Հուն., — Արեսի ամուսինը, Հի 65:

**ԱՍՏՂԻԿ**, Հայ., — Դիցաբանության մեջ համարվել է Նոյ Նահարեատի դուստրը և ճանաշվել է որպես սիրո ու հեշտասիրության աստվածուհի: « Աստղիկը՝ Տարոնի դիցուհին, զուրս էր գաշխաղական աշտիշատի տաճարներից », Բաֆթի, Մամվել, Էջ 22:

**ԱՍՏՐԵԱ**, Հուն., — Զեսի և Յեմիդի դուստրը՝ Դիցաբանության մեջ Աստրեալի մասին կան տարբեր զրույցներ: Ըստ մի զրույցի Աստրեան Զեսի հետապնդումից աղատվելու համար լոր դաշձաւի իսկ մի այլ զրույցում ասվում է, թե երբ Աստրեան կար, երկրի վրա երջանկություն էր տիրում Աստրեալից և էռոսից ծնունդ առան զիշերվա, խաչարերինքում վառվող բոլոր աստղերր, Կուն 90:

**ԱՍՓՈԴԵԼ**, Հուն., — Դիցաբանության մեջ հասկացվել էն որպես Հաղեսի աշխարհի մեջ բուսնող կակաչներ կամ ուն տարածություններ, ուր բացվում են պտերը Ըստ դիցաբանության այդ տարածությունների վրա թափառում էին մեռածների տնմարմին ու թեթևասահ ստվերները: Հաղեսի թագուգորության մռայլ և ասփողել դժգույն ծաղիկներով պատաժ



Նկ. 3 Կակաչողիոս:

դաշտերով թափառում էին մեռելների անմարմին ու թեթևա-  
սահ ստվերները», Կուն ՀՅ

**ԱՍՔԱԼԱՊ,** Հ ուն , — Արեսի և Աստիոքի սիրուն զավա-  
կը, հշխում էին Արեսածին Սսքալապն ու Հալմենոսը», ՀԻ ,  
65:

**ԱՎԳԻԱՆ ԱԽՈՌՆԵՐ,** — Հստ դիցաբանության Լլաղա-  
լի Ավգիաս արքան 30 տարի չեր մաքրել իր ախոռները, ուր  
պահում էր 3000 գլուխ անասուն: Հերակլեսը Ավգիասին առա-  
ջարկեց, որ ինքը մեկ օրում կմաքրի նրա ախոռները, եթե  
արքան իրեն տա նախիրի տասներորդ մասը: Ավգիասը համա-  
ձայնեց: Հերակլեսը երկու կողմից քանդեց ախոռների պատերը  
և երկու զետերի՝ Ալփիոսի և Թինոսի զրերը. բայց թողեց նրանց  
մեջ և այլպիսով մեկ օրում մաքրեց ախոռները: «Նա պիտի  
մաքրեր Ավգիասի ախոռների աղբը», Կուն 200 ֆիր. —  
Ահճոգությունից առաջացած վիճակ, գրություն:

**ԱՎԳՈՒՍՏԱԼԻ,** Հ ուն , — Հոռմեական քրմերի կոյե-  
դիա: Հստ դիցաբանության այդ քրմերը տարածում էին տի-  
րակալի պաշտամունքը, Մ Ը :

**ԱՎԳՈՒԲ,** լատ , — Քրմերի մի դաս: Հստ դիցաբանու-  
թյան ալդ քրմերը թոշունների աղաղակից ու թոփշքից գուշա-  
կում էին գալիքը, Ս Հ

**ԱՎԵՏՅԱՑ ԵՐԿԻՐ** (*Պաղեսափին*), — Դիցաբանության մեջ  
ասվում է, թե աստվածը խոստացել էր այդ երկիրը որպես  
ժառանգություն տալ Հրեաներին: Խորալելցիք 40 տարի անա-  
պատում թափառելուց հետո մտան Ավետյաց երկիրը:

«Տանշանքների միջից նկատում եմ ես

Երկիրն Ավետյաղ հեռու մշուշում»:

Հովի Թումանյան, հ 1 103

**ԱՎԵՐՆ,** Հ ուն , — Լիճ, որը, բայտ դիցաբանության,  
Հաղեսի աշխարհի մուտքերից մեկն է, Մ Ը

**ԱՎՏՈԼԻԿՈՍ,** Հ ուն ., — Հերմեսի որդին, Ողիսևսի պա-  
պը: Հստ առասպելի կարող էր ստանալ ցանկացած կեր-  
պարանքը և իրեն դարձնել անտեսանելի: «Այժմ, Ավտոլիկո՞ս,  
քո ցանկացած անունը տուր քո աղջկու երեխային...», ՀՈ , 272

**ԱՎՏՈՆՈ,** Հ ուն ., — Պենելոպեի նաժիշտներից մեկը,  
ՀՈ , 255:

**ԱՎՐՈՐԱ,** և առ ։, — Արշալույսի աստվածուհին  
«Երդվում եմ ահա ճառագող օրով,  
Վառ Ավրորայի մաքուր շողերով»:

Հովի Թումանյան, հ 2, 92

**ԱՎՔՍՈ,** և ուն , — Տես բարիտներ, Մ Բ., 251

**ԱՏԱՐԳԱՏԵՍԸ,** և ուն , — Տես' ա Սստարտե

**ԱՏԵ** (Աթե), և ուն , — Զեսի դռւստրէ խաթեռության  
աստվածուհի: Հստ դիցաբանության Հերայի խնդրանքով քուն  
բերեց Զեսի աշքերին, և վերջինու մի պահ մոռագության տվեդ  
տրոյական պատերազմի ընթացքը: «Ահեղափար զայրացավ  
խաթեռության աստվածուհի Աթեի վրա», «Աթեն և Յորյան վկա,  
չե՛տ մոռանա» Յու Երբաս 371.

**ԱՏԼԱՆՏԵ,** և ուն , — Արագավազ որսորդ, Կուն 283

**ԱՏԼԱՍԸ,** և ուն , — Պրոռեթեսի եղբայրը: Հստ դիցաբանու  
թյան իր հզոր ուսերի վրա պահում էր երկնակամարը Այդ  
պատիմը նրա համար սահմանել էր Զեսը, բանի որ նա տիտան-  
ների հետ միասին կույի էր ելել տոտվածների դիմ Աւր  
պալտաներն են, չքնազ դստեր շար Ատլատի», 21 4

**ԱՏՐԻԴԵՍ** (Աթրիդես), և ուն , — Այս հրկնակ անունը  
կրում էին Ագամեմնոնն ու Սենելառու: «Ի՞նչդէ յակաս ո՞վ  
Ատրիդես, վրաններդ լիքը պղինձ, վրաններդ՝ ընտիր կա-  
նալք», Սուրխարյան, «Հին հունական յականություն», 86

**ԱՏՐԵՎՈ,** ուն — Կելուզայի + Հիոնոգամիայի սրդին,  
Բստ առասպելի եղբորից վրեժ առնելու առմարտ սպանեց նրա  
երկու զավակներին և նրանց մարմիններից ձաշկերույթ տվեց  
Լորորը: «Ատրեսը նրանց մարմիններից մի սոսկումնալից  
ձաշկերույթ ուս տրաստեց եղբոր համար Կուն, 304

**ԱՏՐՈՓՈՒ** ուն , — Ճակասագրի աստված: Հստ դից-  
աբանության ձեռքուժ մկրտությունը, որով կարուժ էր մարդ-  
կանց կյանքի թելը, M C

**ԱՐԱ-ԳԵՂԵՑԻԿ,** և ալ , — Արամլ որդին, նահապետ  
սոյկապանց: Սա, ըստ դիցաբանության, իր չքնազ գեղեցկու-  
յան համար կրում էր «գեղեցիկ» վերադիրը, Հր Միառյան,  
Անձուանների բառարան

**ԱՐԱՄԱՉԴԻ,** պր ու , — Տես ա Զես: «Իբրև աստվածություն

ընդունված էր նաև հաւ դիցաբանության մեջ, իբր համաստատախան հունական Զեսը զամ՝ ՚իոսի», Հր Սնառ յան, Անձնանեւների բառաշան «. Ինձ էլ ընկճեց Արամազդ», Հովհ Թումանյան և 2, 228

**ԱՐԱՄԱԶԴԻ ԳՈՏԻ,** հայ և .,— Հայ դիցաբանության մեջ հասկացվել է բրագեւ ծիածան:

**ԱՐԱՔՆԵ,** հուն ,— Ըստ դիցաբանության օդի պես թափանցիկ գործվածքներ էր գործում. Հոխորտացավ ինքն իրեն և մրցության կանչեց Աթենասին Վերջինս մրցությունը տանելուց հետո Արաքներ վրա ցողեց կախարդական բույսի հյութը, և նա իսկույն սարդի կերպարանք ստացավ, «Ելդ օրվանից Արաքնեսարդը կախ է ընկած ոստայնից և մշտապես գործում է ան, ինչ գործում էր կենդանության օրոք», Կուն, 58

**ԱՐԳԵԼԱՅՈՍ,** հուն ,— Պենէլոպեի սեղեիներից (տարփածու) մեկը, ՀԱ , 288

**ԱՐԳՈ,** հուն ,— Նավի անուն Ըստ դիցաբանության Յասոնը այդ նավով ճանապարհորդեց Կոլիսիոս ոսկեգեղմը բերելու ««Արգոն» բաց ծով դուրս եկավ» Կուն 339:

**ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐ,** «Արգո» նավի անունով կոչվեղին արշավանքի այն մասնակիցները, որոնք ցանկանում էին ձեռք բերել ոսկեգեղմը. Արշավանքի մասնակիցներն էին Հերակլեսը, Թեսեսը, Պոլիդեքտեսը, Կաստորը և ուրիշներ, իսկ զեկավարն էր Յասոնը: «...Արգոնավորդները իշան Տիրրենլան ծով », Կուն 340

**ԱՐԳՈՍ<sup>1</sup>,** հուն ,— Հարյուրակնյա մի հսկա: Ըստ առասպելի Հերան սրան պահապան էր կունգնեգրել Իուլի վրա, որպեսողի Զեսի և Իոյի սիրո դարպասումների մասին իրեն տեղյակ պահի: Երբ Արգոսի հարյուր աշքի կեսը քնում էր, մյուս կեսը շարունակում էր արթուն մնալ: Արգոսին սպանեց Հերմեսը: «Արգոսը 100 աշք ուներ. »., Մ. Բ., 91 Փիր — արթուն պահապան:

**ԱՐԳՈՍ<sup>2</sup>,** հուն .,— Աքիլլեսի տիրապետության ենթակա մի երկիր: «Դանայոսը լուր 56 աղջիկների հետ մախավ Արգոս», Հոդը 369 «Պելասգոսը խորհուրդ է տալիս ՚Իանարպին, որ գնա Արգոս...», Կուն, 136:

**ԱՐԳՈՍ<sup>3</sup>**, Հ ուն .,— Ողիսեսի շան անունը: «Վեր էր ոնկել  
Արգոսն այստեղ և տանջվում էր պիծակներից..», ՀՈ., 241

**ԱՐԳՈՍԱՍՊԱՆ**, — Հերմեսի կրկնակ անունն է: «Սրգոսա  
սպանը այդ հրամանը իսկույն լսեց», ՀՈ., 66:

**ԱՐԵԳ**, Հ ա լ .,— Դիցաբանության մեջ հասկացվել է հայոց  
ամենահին աստվածը: «Հրալին լուսափալ ճաճանչներով,  
ամեն գիշեր հանգստանում էր Վանա ծովակի մեջ, որի հատակի  
վրա դրած էր նրա ոսկեղեն անկողինը», Բաֆֆի 6 4, 330:

**ԱՐԵԹՈՒՍԱ**, Հ ուն .,— Հավերժահարս որը, ըստ ի-  
ցարանության, պատկանում էր Արտեմիս աստվածուհու խզմ-  
րին: « Հավերժահարս մըն է ու էլիս կը բնակվե, անունը  
Արեթուսա է», Ս թ , 229 (Տե՛ս Ալփես)

**ԱՐԵՌԱԳՈՍ**, Հ ուն .,—  
Արեսի բլուրը: Դիցաբանու-  
թյան մեջ հասկացվել է այն  
բլուրը, որը անդի ունեցով Մրես  
առածու զատը: Ինչպարձակ բա-  
յուսի ությունը տե՛ս Արեսի  
լուսական բայսի բացատրության  
ընթեր:

**ԱՐԵՄ**, Հ ուն .,— Գեսի և  
Ներտիլ գրին, ովատերազմի  
տոսակած Ըստ դիցարանու-  
թյուն ու ոյսկոն պատերազ-  
մուն յաշտողանում էր արո-  
յացիներին: Աև գու, դաժան  
Արես, Յօ Եթրաս, 345:

**ԱՐԵՄԻ ԲԼՈՒՐ**, — Ըստ դի-  
ցարանության Արեսի ովա-  
տակած և իր զատերը բոնարա-  
րուկ պատերոնի որդուն: Սպա-  
նություն զործը քննելու համար դատր գումարվում է Սթենքի  
Ակրոսկոլիսի մոտ եղող բլորի վրա: Այդ դատաքննության  
ընթացքում Արեսը անմեղ է հանաշվում:

Այսպիսով, այն բլուրը, ուր լսվեց Արեսի դատավարությու-  
նը, կոչվեց Արեսի բլուր: «Այդ որեն սկսյալ ատյանին կազմված



Նկ. 4 Արես:

բլուրը Արեսի անունով կոչվեգալ Արեոպագոս (Արեսի բլուր)», Ս Բ , 181.

**ԱՐԵՍՅԱՆ ԴԱՇՏ**,— Արեսյան հրապարակ, այն վայրը, ուր տեղի էին ունենում զինվորական մարզանքներ և հանդեսներ:

**ԱՐԵՏԵ**, Հ ուն ,— Մլքինո թագավորի կինը, որի մոտ հայրենիք վերադառնալիս Ողիսևը որոշ ժամանակ հանգիստ առավու «Արետե են ասում նրան...», ՀՌ , 89 « Սմաղով ծածկված Ողիսևը մոտեցավ Արետեին և ընկավ նրա ոտքերը», Կուն , 520:

**ԱՐԻԱԴՆԵ**, Հ ուն ,— Մինոս արքալի զուստրը Ցեղացի քուլը, Էստ դիցաքանության Արիադնեի օգնությամբ Թեսևը սպանեց Մինոտավրոսին և հաջովությամբ դուրս եկավ լաբիրինթոսից: «Արիադնի օգնությամբ ու խորհրդով նա կարողացավ լաբիրինթոսում սպանել հրեշին — Մինոտավրոսին», Հոդք , 391

**ԱՐԻԱԴՆԵԻ ԿԾԻԿԸ**,— Դիցաբանության մեջ ոլոտմայում է, որ երբ Թևեսը Կրետե գնաց՝ Մինոտավրոսին սպանելու համար, Արիադնեն նրան տվեց որ կծիկ թել թեսևը ալդ կծիկի ծայրը կատեց լաբիրինթոսի գուանը որպեսզի նա վերադարձին չ լոլորվի լաբիրինթոսում, սպանեց հրեշին ու դուրս եկավ՝ կծիկը կրկին կծկելով, Հոդք., 391: Փխը — Ալն միջոցը, որի օգնությամբ կարելի է դուրս գալ գժվարին վիճակից:

**ԱՐԻԱՍՊՈՆԵՐ**, Հ ուն ,— Քստ դիցաբանության բանք համարվել են միաշքանի ժողովուրդ: Արիմասազները ապրում էին գրիփների (արծվի թևերով ու գլխավ և առյուծի մարմնով հրեշներ) հարևանությամբ և նոանց հետ անցնդեղ կորիվներ մզում: «Զգուշացիր նաև գրիփներից և միակնանի արիմասազներից», Կուն , 125

**ԱՐԻԱՆ**, Հ ուն ,— Քստ դիցաբանության ճանաշվել է իբրև նշանավոր բանաստեղծ, քնարերգակ: Պատմվում է, որ Արիոս նավով ճանապարհորդելիս նավաստիները կամեցան նրան ծովը զցել և տեր դառնալ նրա ինչքին: Արիոնը խնդրեց թույլ տալ իրեն վերջին անգամ երգել և ապա ծովը նետել: Մովային դել ֆին-հավերժաբարսը հիացած նրա երգով նրան

դուրս բերեց ծովից, «Արիոն Լեսպոս ծնած նշանավոր քնարեր-  
դակ բանաստեղծ կույր երաժիշտ մըն էր», Ս Բ , 117.

**ԱՐԵՈՎ,** Հ ուն , — Պոսեյդոնի և Դեմետրեի որդին, ֆիա-  
վոր ձի որը, ըստ դիցաբանության, խոսելու կարողություն  
ուներ, որովհետեւ ծնվել էր այն ժամանակ, երբ Դեմետրեն և  
Պոսեյդոնը ձիու կերպարանք էին ստացել:

**ԱՐԵՍՏԵՍ,** Հ ուն , — Ապոլլոնի և Հավերժահարս Կրու-  
րենեայի որդին, առաջին մեղվաբույժը: Ծատ դիցաբանության  
մարդկանց սովորեցրեց մեզրի գործածությունը և կաթի մա-  
կարդումունք: Համարվել է հողի, հողագործության աստված և  
Հովանավորը հոտերի ու հովիվների: Նա մարդկանց սովորեցր եց  
նուն դինեգործություն, Ա. Ը

**ԱՐԿԱԼԱՓՈՍ,** Հ ուն , — Քստ առասպելի դժոխքի  
աստված Պլուտոնը սրան պահակ էր կարգել լուր կնոջ Պերսե-  
փոնեի վրա, Յո Երաս 479

**ԱՐՀՄ (Ահրիման),** Պ թ ս , — Զարության աստված:

**ԱՐԶԱԳԱՆԳ,** Հ ա լ , — Հայկական դիցաբանության մեջ  
շատ լեզվանի հավերժահարս անատ սիրուն և լեզվանի հավեր-  
ժահարս մըն էր Արծագանզը, Ս Բ , 161

**ԱՐՄԻԴԱ,** Հ ուն , — Թեթև վարքի տեր կին: Դիցաբա-  
նություն մեջ ճանաչվել է ուղես թովշուհի, դլութիւն գեղեց-  
կուհի, Դ. Ը

**ԱՐՇԱԼՈՒՅՅՈ,** Հ ուն , — Էռլիսի աստվածուհին: Քստ  
դիցաբանության Ապոլլոնը և Արշալույսը երկվորյակներ եին:  
Մագեց Վարդամատն Արշալույսը ՀՅ , 134

**ԱՐՊՈԿՐԱՏ,** Հ ուն , — Էռության աստված: Ծատ դի-  
ցաբանության Արտոկրատը պատկերվել է մատը շրթունք-  
ների վրա դրած:

**ԱՐՏԵՄԻՑՅ,** Հ ուն , — Զեսի և Ստոյի զուսաբրւ, ծնվել է  
Կելու կզբում: Դիցաբանության մեջ ճանացվել է որպես  
Համբաժ կեռատի և չքնաղ աստվածուհի: Սկզբում ճանաչվել  
է որպես լուսնի աստվածուհի, Հետագայում՝ որսորդության  
նրա ըարեւաղթության հովանու տակ բերկրությամբ էր լըց-  
մում ճարսանիքը Արպէս ամուսնության և ճարսանյաց հովա-  
տայորի, հուրի կանալք Արտեմիսին զոհ եին մատուցում: «Ար-  
ծաթագեղ Արտեմիսը շքեղությամբ մտավ սրահ», ՀՈ., 45

**ԱՐՓԻ**, Հուն., — Ապոլլոնի կրկնակ անունն է: Բատ դիցաբանության Արեսը և Աֆրոդիտեն, մութ գիշերը ժածկույթ դարձրած, սիրո ազտնի կենակցության մեջ էին, երբ Արփին այդ մասիս հալտնեց Հեփեստոսին (Աֆրոդիտեի ամուսնուն): Գրականության մեջ հասկացվում է որպես ավետարեր:

«Եվ Արեսն իր նվերներով սլզեց մահին այն կաղլիկի,

Այնժամ Արփին ավետարեր՝  
գնաց հալտնեց Հեփեստոսին»,  
ՀՈ, 105



Նկ. 5 Արտ Իր

մենամարտեցին: Երև Արտ լոռու անուավ, որ ողարտվում է օձ դարձագլ: Այնժամ Հերակլեսը ասաց «Դեռ օրորոցում եմ օձերի հետ կովել»: «Սքելոռոսը ճիդ էր թափում զուրս զբծնելու հերոսի ձեռքերից», Կուն 224

**ԱՔԵՐՈՆ**, Հուն., — Բատ դիցաբանության սա հասկացվել է որպես սգո գետ, որ դանվում էր Հագեսի աշխարհում: Հասկացվել է նաև որպես զժոխք, տարտարոս: Նրա վրալով էին տէղափոխում մեռածների ողիները, Հոդք., 387

**ԱՔԻԼԼԵՍ**, Հուն., — Պելոս արքայի և Թետիս աստվածուհու որդին: Բատ հունական դիցաբանության Աքիլլեսը մանուկ հասակում կերակրվել է արջի շւզեզով և առյուծի լյարդով:

Մայրը մանուկ Աքիլեսի մարմինը օծել է ամբողջով և պահել կրակի վրա՝ նրան անխոցելի դարձնելու համար։ Պելիսը կնոց արդ արարքից սարսափած՝ վերցրել է որդուն և հանձնել Կենտավրոս Քիրոնի դաստիարակությանը։ Դիցաբանության մեջ սյատմվում է նաև, որ Թեսτիսը Աքիլեսին թաթախել էր Մտիքս գետի սուրբ զրերի մեջ, որից և նրա մարմինը դարձել էր անխոցելի։ Բայց Աքիլեսի կրունկը դուրս էր մնացել ջրից, և հենց այդ մասն էլ դարձավ նրա խոցելի տեղը։

Մոտ «Էլիական» իւ կրկ սկսվեց տրոյական պատերազմը, Արիլեսի ծնողները որդուն խացրին և նրան ագցրին աղջկա շորեր, որպեսզի նու պատերազմին շմասնակցի, քանի որ գուշակն առել էր, ոչ եթե Աքիլ ոք մասնակցի ալդ պատերազմին, իր մահը կդառնի այստեղ։

Խորոժանկ Ռդիսես, և Աքիլեսի ուսուցիչը Եկան այն կը զի՞ն, ուր զանգում էր ծովոյալ Աքիլեսը։ Նրանք հանդեւ եկան սրոցի խճառականներ և աղջիկների առաջ միաէցին խաղաղիքներ ու նէտեր Եկվորները անսովասելի կովի կու աղջարարուցին տքիկները վերցրին խաղալիքները, իսկ Աքիլեսը՝ ունանու ու նէտեր Դրանու բացվեց գալունիքը։

Տրոյական պատերազմուն Աքիլեսը շատ սխրագործություններ կատարեց, բայց 10-րդ տարում Ագամեմնոնի Հետ զժայիկ Երիսես սիրունու պատճառով և էլ յասնակցել ալդ ուստերազմին։ Տրոյացիները տեսնելով, ու պատերազմի դաշտում Աքիլեսը կը չի նրեւում, նախահարձակ ելան և ծանր կորուսաներ պատճառեցին հույնէրին։ Բայց երբ այդ մարտուն ընկավ նաև Աքիլեսի սիրելի ընկերը Պատրոկլեսը, Աքիլեսը մարտի դաշտ դուրս եկավ և խախտեց տրոյական բանակի կալմքը, ոպանեց ու անլուր շարշարանքներ պատճառակ Հեկտորի անշունչ մարմնին։ Սակայն իրականացավ կանխազուշակությունը Սպոլլոնի օգնությամբ Պարիսը նետահարեց Աքիլեսին, նետը կպավ նրա գարշապարին, որը նրա միուն խոցելի տեղն էր։

«Նրագիր քենը, ո՞ւ դիցուհի, Պելիսածին Աքիլեսի,

Որ բյուր դավեր աղետավոր բերեց այնքան Աքայեց»

Սուրխարյան, Հին հունական գրականություն, 33։

**ԱՐԵԼԼԵՍՅԱՆ ԳԱՐՇԱՊԱՐ**, — Տե՛ս Ա ք ի ւ է և բառի  
բացատրությունը, Փխիք — Աարդու իոնցելիք, Թուզլ տեղը:

**ԱՔՍԻՆԵ**, Հուն., — Հավերժահարս, Կուն, 302

**ԱՔՍԻՈՍ**, Հուն., — Գետի աստված: Ըստ դիցաբանության սրա որդին տրոյական պատերազմում մարտի դուրս եկավ Աքիլլեսի դեմ և շարաշար պարտվեց: «Աքիլլեսի դեմ խիզախեց դուրս գալ գետի աստված Աքսիոսի որդին», Կուն, 460

**ԱՔՏԵՌՆ**, Հուն., — Ավտոնոլի որդին: Դիցաբանության մեջ հասկացվել է որպես առասպելական որսո դ, Որսի ժամանակ, ըստ առասպելի, Արտեմիսին առ տևավ մերկ վիճակութ լոգանք ըսդունելիս: «Եվ ցասումնալից Արտեմիսը տարաբախտ Աքտեռնին բարեկաղմ եղած հարձրեց»: Կուն, 52:



Նկ. 6 Ակտեռնի

**ԱՖԻՆԱ**, Հուն., — Պատերազմի և Հաղթանակի աստվածուհի: Դիցաբանության մեջ ասկացվել է որպես երկնքի տօսութածուհի, կաթակի ու որսուհի տիրակալ, պատղաւ երության աստվածուհի: Աֆինան մարդկանց սովորեցրեց ձիեր սանձելը, ոնատուններ լծելը և սայրակ ու նավ կառուցելը, Ճ. C.

**ԱՖՐՈԴԻՏԵ**, Հուն. — Աւրանոսի դուստրը, սիրո դեղանի աստվածուհին: Ըստ դիցաբանության «Կիթարա եղաւ մոտ, ծովի ալիքների ձյունասղիտակ փրփուրներից և ծնկեւ

**Աֆրոդիտենց**, Կուն., 65: Նա ճանալվել է որպես սիրո մայր, ժիծաղի թագուհի, ամուսնության և հաճույքների տիրուհի, սիրահարների հովանավոր։ Հետագայում դաշնակ հեղտասիրության աստվածուհի։ Այս վերջին իմաստով ոչ մի տարբերություն չկա փյունիկացիների Աստարաւու ասորեստանցիների հշտար աստվածուհիների սիցեւ

Զեսը, երբ Աֆրոդիտեից սիրո մերժում ստացավ, որպես պատիժ նրան ամուսնացրեց Հեփեստոսի հետ, որը արհամարհաված էր բոլորի կողմից իւր տղեկության պատճառով։ Աֆրոդիտեի սիրենյան հմալքը մի աֆրիկյան քրմուհու կերպարան բովու, Վ. Փ., հ. 1, 257.

## Բ

**ԲԱԲՏԻԼ**, Հուն., — Սուրբ քարտ Դիցաբանության մեջ չու կոչվել է որպես թալիսման, M. C.

**ԲԱԼԽ**, Հայ., — Աստվածուհի Դիցաբանության մեջ տախում, թե Բախտը արագ ձեռքուշ պատեցնում է աշխարհի անիվը՝ Չարխի-Փալակը, Բախթի Կայծեր 73

**ԲԱԿԴԱՍԱՐ**, Հայ., — Ծովինարի որդին, Սանասարը և Էտզուանը Երկվորյակներ էին, որոնք, բատ դիցաբանության, ունեն ջրալին շաղամ, Ո. Պ.

**ԲԱԿՄԻԼԵՅ**, Հուն., — Զեսի կուսարու Դիցաբանության մեջ առնաշուշի է որպես Զեսի կուծակների պատասխանց. M. C.

**ԲԱՐՇԱՄԱ**, տար., — Դիցաբանության մեջ հասկացվել է որպես բարելացոց Իել աստվածը, Հր Անայան, Անձնանունների առարան

**ԲԱՅԹԻԲՈ**, Հուն., — Դիցաբանության մեջ հասկացվել է այն անապատ, որոնդ Հյուպինկալեցին Դիմետրա աստվածունուն, երբ նա վնատրում էր յուր գոտերը, M. C.:

**ԲԱՔՈՍ**, Հուն., — Զեսի և Սելեմեի որդին, Դիոնիսոս տասնմակ անունը։ Դիցաբանության մեջ համարվել է զինու, զինեգործության և բանաստեղծության աստված։ Հայուացվել է նաև որպես խմբապարերի, շվալտանքի աստված։ Հայուացվել է այս այսպես, ակամայից սովորեցի Բաքոսի խնկարկության, Վ. Փ., հ. 2, 220:

**ԲԱՐՈՍԱԿԱՆ**, — Շվայտ, խրախճանքային, «Եթ սարսաւիկելի պարահանդես էր այդ, որի նմանը երբեք Դիոնիսոսը չէր երևակայել իր բաքոսական բոլոր անբարոյականությամբ», Բաֆֆի, ե. 3 66:

**ԲԱՐՈՍԱԿԱՆ ՊԱՐԵՐ**, — Անառակ, շվայտ ու ցոփ խընչույք «Խնջույքը փոքր առ փոքր դառնում էր հարբած և սանձարձակ օրգիա: Ասորի աղջիկները, որոնք մի փոքր առաջ բաքոսական պար էին պարում, խառնվեցին հյուրերի հետ »,  
Յո Երաս, 103

**ԲԱՐՈՍՈՒԾՀԻ**, — Բաքոս աստծո հետ շրջող, խմբապարերին մասնակցող կանայք:

«Հանդերձներովը պարի, բամբիոն ալ մատներուն,

Ասողերուն տակ աղոթող բաքոսուհվոմ էր նման»:

Պ Վ 278

**ԲԵԼ, առ ու**, — Բարելացիների աստվածը:

«Հիշեցեք Հայկին, որ բուռն քաջերով

Դեմ կեցավ Բելին, հոգին անխռով», Ո Պ 107

**ԲԵԼԼԵՐԵՖՈՆ**, հուն., — Գլավքոսի որդին, Արլէփիոսի թոռը, հատ դիցաբանության Փեղասին հեծուծ՝ սպանեց Քիմեռ հրեշին: Խիզախորեն նրա մեջքին ցատկեց Բելլերեֆոնը», Հի 133

**ԲԵԼՈՍ, հուն.**, — Էպափոսի որդին Զեսի և Իոյի թոռը: Հստ դիցաբանության ունեին երկու որդի, որոնց աստվածը պարզել էր 50 որդի: «Զեսի և Իոյի որդին Էպափոսը, Բելոս անունով մի դավակ սւներ», Կում 135

**ԲԵՆԴԵԾ**, հուն., — Էռւանի աստվածուհի: «Դիցաբանության մէջ Էռյացվել է Սրտեմիսի, Հեկաբեի և Պերսեփոնեի հետ: Նրա պատվին Հունաստանում կատարվում էին տոնակատարություններ: «Թրակիացիները իրրե լուսնի աստվածուհի կը պաշտէին Բենդեսը», Մ Բ 122

**ԲԵՐԵՆԻԿԵՒ** ԾԱՄԵՐԸ, — Հստ ավանդության թերենիկէն Աֆրոդիտեի տաճարում ուխտ արագ՝ եթե պատերազմից վերաբառնա իր ամուսինը, լուլ ծամերը կկտրի և կնվիրի տաճարին: Այդպես էլ արեց: Բայց Աֆրոդիտեի տաճարից աստվածները նրա ծամերը տարան, որպեսզի օրինակ լինի ուրիշներին: «Թերենիկեն գնաց Աֆրոդիտեի տաճարը, աղոթեց և ուխտ 30

արակ ամուսինը պատերազմեն ողջ գառնալու պարագային իր մազերը սիրով նվիրել աստվածուհին», Մ. Բ., 167

ԲՈՆՈՍ, Հ ուն .,— Առասպելական գայրի ցուլ կամ երե՝ ձիու բաշով և դեպի ներքն գալարված եղջյուրներով։ Այդ աւաստելական կենդանին, ըստ դիցաբանության, որսորդներից պաշտպանվելու համա, իր կունը նետում էր նրանց վրա և դրանով ալում, Ս. Ս.:

ԲՈՐԵԱԴ, Հ ուն .,— «Բորեասի երկու թևավոր որդիները, Կալախիդեսը և Զեթեսը, որոնք, ըստ դիցաբանության, մասնակցեցին արգոնափորդների արշավանքին։ Նրանք ազատեցին իրենց քրու ամուսնուն՝ Փինսսին, Հարակիաներից», Կուն, 322։

ԲՈՐԵԱՍ, Հ ուն .,— Ատրեսայի և էռափ որդին, աստվածուհի Իիցաբանության մեջ հասկացվել է որպես Հյուսիսային մոլեգին քամի։ «Թրակիան համարվում էր Բորեասի հալլունիքը» Հոդր., 377

ԲՐԻԱՐԵՎՈ, Հ ուն .,— Ուրանոսի և Գեայի որդին, Հարյուրաձեռն հսկա։ Ըստ դիցաբանության Հերան Աթենասի ու Պոսեյդոնի հետ ցանկացավ շղթայակապ անել Զեսին, ըայց Բրիարեսը, չսելով Թետիսին, ձախողեց նրանց ծրագիրք։ «Իուկանչեցիր Հարյուրաձեռն այն հսկային, որին մարդիկ անվանում են էղափոն, իսկ մեծազոր աստվածները՝ Բրիարես», Հի, 45.

ԲՐԵՋՈՒՀԻ (Իերիզուհի), Հ ուն .,— Սպոլլոնի Քրիսոս քրոմի գուստորը, Աքիլլեսի սիրուհին, որի համար, ըստ «Իլական»-ի, վեճ ըացվեց Աքիլլեսի և Ազամեմնոնի միջև։ Ազամեմնոն (Աթրիդեսը) ետ վերցրեց Բրիզուհուն Աքիլլեսից։ «Հենց քի առաջ Բրիզուհին, որ պարզն էր իմ պերճագույն, — ասում է Աքիլլեսը, — իմ վրանից Աթրիդեսի սուրհանդակները եկան ու արան» Հի, 45.

ԲՐԻՍԵԽՈ, Հ ուն .,— Զեսի դուստրը, Սրտեմիսի սիրելի ուղեկիցը։ Ըստ դիցաբանության հովանավորում էր որսորդներին, ձկնորսներին և նավաստիներին։ «Նա գերավարեց Ապոլլոնի քուրմ Քրիսոսի դստերը՝ շքնաղագեղ Բրիսեխուհին...», Կուն 381

ԲՐԻՍԵԽՈՍ, Հ ուն .,— Պոսեյդոնի և էպափոսի դուստրը

Հստ դիցաբանության ցանկացել է Հերակլեսին զոհաբերել Ձևսին, «Բուսիրիսը հրամայել էր..., Կուն, 218»

## ¶

**ԳԱԲՈՍԱ,** Հուն., — Զար ոգիւ Դիցաբանության մեջ հասկացվել է որպես մի շար ոգի, որ մատենում է քնած մարդկանց, չոքում նրանց բկին և աշխատում խեղղամահ անել, Ս. Մ. Տ.

**ԳԱԲՐԻԵԼ,** Երր., — Հստ քրիստոնեական վարդապետության համարվել է հոգեառ հրեշտակապետ, Ս. Մ. •

**ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂ,** Այն փողը, որ, ըստ քրիստոնեական ուսմունքի, վերջին տարտարոսի օրը պետք է հնչեցնի ծաբրիել հրեշտակապետը, «Վախտը հասել չի, որ մեկ ժաբրիելյան փողը փշեն, աշխարհքս հայելու պես դզվեր», Խ. Սրովյան, 123:

**ԳԱԼԱՏԵԱ,** Հուն., — Գեղանի ներեիդ (ծովային հավերժահարս): Հստ դիցաբանության դեղեցիկ Գալատեային սիրում էր և՝ Աքիսը գետի աստվածը, և՝ կիկլոպ Պոլիփեմոսը: Վերցինս սիրո խանդից Ակիսին ծովը նետեց, «Գեղանի ներեիդ Գալատեան սիրում էր սկատանի Սքիսին», Կուն 298

**ԳԱՂԱՏԵԱ,** Ուն., — Կիպրոսի մեջ արվեստագետ Պիգմալիոնը: Հստ դիցաբանության իր ձաշակին համեմատ աղջիկ չէր գտնում: Նա փղոսկրից քանդակեց իր ուզած գեղեցկության մի արձան և ախալք սիրահարվեց իր ստեղծագործությանը, որ խնդրեց Վեներային կյանք տալ նրան: Վեներան կատարեց նրա ցանկությունը Պիգմալիոնի լինդանություն ստացած արձանին անվանեց Գաղատեա, Կուն 67

**ԳԱՆԻՄԵԴԵԱ,** Հուն., — Տրոյայի Տրոս արքայի գեղեցկատեռ որդին: Գանիմեդեսը այնքան գեղեցիկ էր, որ, ըստ դիցաբանության, Ձևսը նրան Օլիմպիոս տարավ և Հիբեի փոխարեն աստվածներին մատուիակ գարձրեց: «Էրոս այդ ժամանակ վեգ էր խաղում Գանիմեդեսի հետ», Կուն, 328:

**ԳԵԱ,** Հուն., — Քառսի դուստրը, երկրի աստվածուհին: Հստ դիցաբանության կյանք էր տալիս այն ամենին, ինչ ծնունդ էր առնում երկրի վրա:

**ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՄԵջ պատկերված է մինչև գոտին գետնի մեջ, ձախ ձեռքին առատության եղջուրը. նա ազոթում է Զեսին իր գիգանտ որդիներին պահպանելու համար:**

**ԳԵՄԻՌՆ, ՀՈՒՆ, — Կրեոնի որդին, Անտիգոնի նշանածը:**

**ԳԵՆԻՌՆ, ՀՈՒՆ, —**  
Ի իցարանության մեջ պատկերված է թեավոր պատանու կերպարանքով: Հասկացվել է որպես հանճար, հոն ձև բեղ մարդ, Մ. Հ.

**ԳԵՐԻՌՆ, ՀՈՒՆ, —**  
Հրեշավոր հսկա: Թրիստառսի և օվկիանուհի Կալիրոեի որդին: Ըստ դիցարանության ուներ երեք մարմին Երեք գլուխ, վեց ձեռք, վեց ոտք: Հերակլեսը Գերիոնից խլեց նրա ողջ նախիրը և նվիրաբերեց լվուսթեսին: «Գերիոն ոի հրեշավոր հսկա էր», Կուն, 212.

**ԳԻԳԱՆՏՆԵՐ, — Հրեշավոր հսկաներ, որոնց ըստ դիցարանության, ծնել էր Գեան՝ Հղիանալով Ուրանոսի արյան կաթիլներից: Գիգանտների ոտքերի փոխարեն օձեր էին, իսկ գլուխներն ու երեսները ոգաւոած էին թավ մազով: Գեան նրանց ավել էր ապաքինով գեղ, որով նրանք անխոցեշի էին մնում տուովածների կողմից: «Գիգանտների մայրը՝ Գեան, մի ապաքինով միջոց էր տվել»: Կուն, 230.**

**ԳԻՇԵՐ, ՀՈՒՆ, — Առողջածուհի: «Դիցարանության մեջ նկարագրվում է այսովու սետթույր ձիերը լժած՝ լրկանվով սահում էր երկնքով: «Ճեսը ցամկոտ՝ խիստ սպատկառեց վեհ Գիշերից...»: Հի, 275**

**ԳԻՒՎՐԵ, ՀՈՒՆ, — Կրեոնի դուստրը, որի գեղեցկությունը, ըստ առասպելի, գայթակղվեց ծասոնը և դրժեց իր սիրու երդումը Մեղեային: «Յասոնը, գերվելով Կրեոնի դստեր՝ Դյավթեի գեղեցկությամբ, դրժեց այն երդը ամերը, որ տվել էր Մեղեային», Կուն, 347:**



Նկ. 7 Դևու

**ԳԼԱՎՔՈՍ**, հուն .,— Ծովային աստված Սիզիփոսի որդին: Դիցաբանության մեջ հասկացվել է որպես ծովայինների և ձկնորսների հովանավորը: Ըստ առասպելի նա վերջում ձուկ դարձավ: «Այդ էսլյան Սիզիփոսից ծնունդ առավ Գլավքոսը», ՀԻ., 133:

**ԳՈՂԳՈԹԱ**, երր .,— Ըստ քրիստոնեական վաղդապետության այն վայրն է, ուր խաչվեց Քրիստոսը: Դիցաբանության մեջ այդ տեղը հիշվում է Երուսաղեմի մոտ:

«Իմ արյունոտված սիրուս ահա  
Պարզված է բաց դեպի ձեզ,  
Արպես դեպի մի նոր խաչ,  
Մի նոր գոզգոթա», Վ. Տ., 395:

**ԳՈՐԳՈՆ**, հուն .,— Հրեշ կանացի կերպարանքով: Ըստ առասպելի Գորգոնի մարմիսը պատած է թեփուկներով, որոնք անխոցելի են դարձնում նրան: Հրեշի գլխի վրա մազերի փոխարեն շաշող թռւնավոր օձեր են գալարվում: Գորգոնին նայողը քար էր կտրում սոսկումից: «Ճոշանին վրա կփայլի խոժոռադեմ Գորգոնան», Կ. Վ., 83.

**ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ**, — Փոյուգիայի Գորդիոս արքան, ստ կի արանության, մի սայլ ուներ, որի լուծվ քեղից կապված էր այնպիսի ճարտար հանգույցով, որ ոչ ոք չէր կարողանում արձակել Պատգամախոսն ասել էր, որ այդ հանգույցն արձակողը կտիրի ամբողջ Ասիան: Ալեքսանդր Մակեդոնացին շատ անհաջող փորձերից հետո թրով կտրեց այդ հանգույցը, Ս Մ Փիլի — Դժվար լուծել! կնճռոտ գործ

**ԳՐԱՅՆԵՐ**, հուն .,— Երեք քույրեր, որոնք, ըստ գիշաբանության, միասին ունեին ընդամենը մի աշք ու մի ատամ, որ հերթով գործածում էին պետք եղած ժամանակ: Հենց այդ փոխանակման ժամանակ Պերսեսը նրանցից խլեց դրանք: «...միակնանի գրայները առաջնորդում էին նրանց», Կուն, 142:

**ԳՐԻՓՆԵՐ**, հուն .,— «Երծվի թևերով ու գլխով և առյուծի մարմնով հրեշներ, որոնք, ըստ գիշաբանության, պաշտպանում էին ոսկերեր հողաշերտերը, որոնք գտնվում էին Ասիայի ժայռագույն հյուսիսում», Կուն, 125.

**ԴԱՄԱՍՏԵԱ, Հ Պ Հ Ն . — Տե՛ս Պըսկրուտես:**

**ԴԱՄՈԿԼՅԱՆ ՍՈՒԲ, Հ Պ Հ Ն . — Ըստ ավանդության Դամոկլեսը նախանձում էր Դիոնիսոս բռնավորի բախտավորությանց: Դիոնիսոսը, կամենալով հասկացնել նրան յուր հոգեկան ծանր վիճակը, Դամոկլեսին հրավիրեց իր մոա ճոխ բնթրիքի և հրամայեց իր ծառաներին, որ նրա գլխի վերևում մի ձիու մազից կախեն ծանր, սրածայր սուրու ծրբ Դամոկլեսը սուրբ տհամավ, լիքը բաժակը ձեռքից վայր ընկավ, Ս Հ., Փխր — Վտանգ, որ ամեն վայրկյան սպասում է մարդուն:**

**ՍԻՆՈՆ<sup>2</sup>**, երր., — Երուսաղեմի մոտ դտնվող մի լեռ, որ հասկացվում էր նաև Երուսաղեմ: «Հին մարդարե մը ասանկ պիտի Սինոն ճամփորդեր», Դ. Վ., 138:

**ՍԻՐԵՆԱՅՐ**, հուն., — Ֆուրկիայի և Կետոյի դուստրենը, որոնք բնակվում էին Սկիլլա կոչվող ժայռի մոտ: Դիցաբանության մեջ պատկերվել են որպես թռչնամարդ էակներ: Սիրենայր իրենց կախարդիշ երդերով գերում էին ծովագնացներին: Հենց որ դայթակղվածները ոտք էին դնում կղզին, քար էին դառնում: Ողիսեսը հայրենիք վերադառնալիս անցավ այդ կղզու մոտով և որպեսզի շգայթակղզի նրանց հմայող երդերից, իրեն կապեց նավի կայմին, բայց շփակեց ականջները, որպեսզի լսեր նրանց ձայնը: Այսպիսով Ողիսեսը առաջին մարդն էր, որ լսեց սիրենների ձախնը և մնադ կենդանի: Այս կղզու մոտ վ անցան նաև արգոնակորպները, բայց Սրբեսով

**Հմայիշ նվադի շնորհիվ նրանք շունկնդրեցին սիրենայքի կախարդիշ երդերը և անկաշկանդ անցան։ «Որպես մի Սիրենե կախարդում էր մեզ և թունավորում մի նենդ օճի պես», Հ. Հովհաննիսյան, 119.**

**Սիրինջս, հուն., — Հավերժակարս Ըստ դիցաբանության Պան աստվածը սիրեց Սիրինքսին, բայց Պանի ահասարսուր կերպարանքը տեսնելով Սիրինքսը ահարեկված փախուստի դիմեց։ Փախուստի ժամանակ հանդիպեց մի անանցանելի գետի։ Երբ տեսավ, որ Պանը մոտենում է, Սիրինքսը խնդրեց Գետ աստծուն ազատել իրեն։ Գետ աստվածը նրան եղեգ դարձրեց։ Պանը կտրեց եղեգից մի ճյուղ և սրինդ պատրաստեց։ «Հավերժակարսի հիշատակին, Պանը սիրինքս (հայերեն սրինգ) կոչեց իր հնարած դործիքը», Կռւ, 112**

**ՍԿԻԼԱ, հուն., — Յուրկիայի և Հեկատեի գուստը։ Դիցաբանության մեջ պատկերված է որպես մի հրեշ, որ ուներ 6 դլուխ՝ երկար ու բարակ վզերի վրա։ Սկիլլան ապրում էր Սիցիլիայի մոտ դժնվող մի քարանձավում։ Մովազնացների համար այդ կողմերով անցնելը խիստ վտանգավոր էր։ Սիայն արգոնավորդները կարողացան այգտեղով անցնել, որովհետեւ նրանց հովանավորում էր Հերան։ Դիցաբանության մեջ այս պես է պատկերված։ «Անդ ապրում էր հրեշ Սկիլլան և կաղ կանձում ահեղազգու, նրա ճայնը նմանվում էր նորածին շան ճագի ճայնին։ 12 ոտք ուներ նա, ու ամեն վզի վրա մի ահոելի մոալլ գլուխ էռաշար, խիտ ու սրածայր ատամներով, որ շարունակ սկ ու գաժան մահ է ժայթքում։ Մինչև մեջքը պահ է մտել քարանձավի խոռոչի մեջ, իսկ ահավոր այդ անդունդից իր դլուխն է գուրս հանում՝ ժայռի շուրջը տնտղելով, և որոնում է անտ իր համար գելֆիններ ու շնակեր և ծովալին այ, զազաններ», ՀՈ., 165**

**ՍԿԻԲՈՆ, հուն., — Մի ավազակ, որը բնակվում էր Մեղարայի սահմաններում վեր քարձրացող սարի քարձր կատարին։ Սկիբոնը, ըստ դիցաբանության, մոտակայքով անցնող բոլոր մարդկանց իր մոտ էր կանչում և ստիպում, որ լվանան իր ոտքերը Հենց որ ճամփորդը պատրաստվում էր կատարել նրա պահանջը, ավազակը ոտքի հարվածով տարաբախ-**

**ԹԻՆ ԺԱյռից նետուս էր ծովը որի սարմինը ջախջախվում էր ու կեր դառնում ծովալին կրիային։ Յ ևսևն իր շրջագալության ժամանակ պատահեց այս հրեշին և նույն ճակատագրին արժանացրեց նրան։ «Երբ Սկիբոնն ուզում էր Թւևսին էլ ցած դցել ժայռից, հերոսը բռնեց ավագակի ոտքից ու նևաեց ծովի կատաղի ալիքների մեջ» Կուն, 267։**

**ՍՄԻՆԹԵՈՍ, Հ ուն ,— Ապոլլոնի կրկնակ անուններից մեկը։ «Սմինթեոս, ուր էիր դու այն ժամանակ», ՅԱ Երթաս, 600։**

**ՍՈՂՈՄ, Է բ բ — Դիցաբանության մեջ հասկացվել է ապականված բարքերով մի քաղաք, որը գտնվել է Պաղեստինում։ Նրա բնակիչների անբարոյական վարքի պատճառով երկնքից կրակ թափվեց նրանց վրա Ա. 2**

**ՍՈՂՈՄԱԿԱՆ ԽՆՉՈՐ, — Առաւ պելական պտուղ, որ բոււնում է ըստ առասպելի, Սողոմ քաղաքի մոտ, Մեռյալ ծովի ափին։ Յաղ ինձորք իբր թե լի էր փոշով, Մ Հ**

**ՍՊԱՆԴԱՐԱՄԵՍ, Հ ուն ,— St ս Բախոս**

**ՍՏԵՆՏՈՐ, Հ ուն ,— Տրոյական պատերազմին մասնակցող մի հույն գինվոր, որը, ըստ առասպելի, ուներ 30 տնձի ձայնին հավասար ձայն Առ Հերմեսի Շատ մրցության մեջ մտավ, բայց պարտվեց Ա. C.**

**ՍՏԵՐՈՊԱ, Հ ուն ,— Աքելայսուի կինը, հավերժահարա Քստ դիցաբանության Հերակլեսը Ստերոպայի հորը նվիրեց Գորդոն մեղուզայի խոպոպները, որի շնորհիվ նա կարողացավ ետ շպրտել թշնամու հարձակումները, M. C..**

**ՍՏԻՄՓԱԼՈՍՅԱՆ ԹՈՉՈՒՆՆԵՐ, Հ ուն ,— Դիցաբանության մեջ հասկացվել էն որպես մետաղյա փետուրներով, ճանկերով ու կտուցներով թռչուններ, որոնք ապրում էին Արետյաս կղզում։ Այս թռչունները բարձրանում էին օդ և այնտեղից նիզակների նման թափում իրենց փետուրները հակառակորդի վրա։ Ստիմփալոսյան թռչունները կհրակրվում էին մարդկանց մատվ։ Երբ արգոնավորդները կովի բռնվեցին սրանց հետ, Հերակլեսը սպանեց մի քանիսին, իսկ մյուսները հեռացան դեսպի Պոնտոս։ «Ստիմփալոսյան թռչունները Հունաստանի սահմաններից հեռացան դեպի Պոնտոս», Կուն, 197։**

**ՍՏԻԶՈՒ, Հ ուն ,— Օվկիանոսի դուստրը, հավերժա-**

հարս, դետու Այս գետը հոսում էր Հաղեսի աշխարհում, նրա  
ջրերը, ըստ առասպելի, սուրբ են համարվելու Աստվածները  
հաճախ են երդվել Ստիքսի սուրբ ջրերով: «Ստորերկրյա Ստիքս  
դետի ջրերով երդվելու աստվածների անխախտ երդումն էր  
համարվում», Կռն, 514 «Սպասում էր նոր եկվորին

Քարոնը սև Ստիքսի մոտ»,

Հովի Թումանյան, ն 2, 230

**ՍՏԻՔՈՅԱՆ ՇՆԵՐ,** հուն., — Դիցաբանության մեջ  
ասվում է, որ այս շները թափառում էին Ստիքս գետի ափերին  
և շրջում էին Հեկատե աստվածուհու հետ: «Թափառում է նա  
ճանապարհների վրա ստիքսյան շներով շրջապատված »,  
Կուն 36

**ՍՔԻԼԱ,** հուն., — Տես Սկիլա Հոդը, 386

**ՍՔԻԲՈՆ,** հուն., — Տես' Սկիբոն Հոդը, 394

**ՍՖԻՆՔԾ,** հուն., — Տիտոնի և Էքիդնայի որդին: Դիցա-  
բանության մեջ պատկերված է որպես մի հրեշ կնոջ դլխով ու  
առյուծի մարմնով: Սֆինքսը բնակվում էր Թերե քաղաքի մոտ  
գտնվող Սփինդիոն լեռան վրա և միշտ նորանոր զոհեր էր պա-  
հանջում Թերե քաղաքից: Ճակատադրի կամքից խույս տալու  
համար էղիպը վերադարձավ Թերե: Քաղաքի բնակիչները  
խնդրեցին նրան լուծել Սֆինքսի հանելուկը: Էղիպը կատարեց  
նրանց խնդրանքը: Եթզ Սֆինքսը տեսավ, որ իր հանելուկը  
լուծված է, թափահարեց թերերը ու ժայռից ծովը նետովեց:  
«Սֆինքսի պես հոկայական ...», Ե Զ., 251

## ¶

**ՎԱՀԱԳՆ,** հայ., — Հայկական դիցաբանության մեջ  
ճանաշվել է որպես Արամազդին հավասար աստվածներից  
մեկը, նաև որպես ամպրոսային աստված: «Ո վ դու Վահագն,  
աստվածահայր զորության», Պ Վ., 75: «.. Դու հիշում ես  
վիշտապաքաղ Մահապնին, հարոց անպարտելի Հերկուլեսին»,  
Բախթի, ն 5 325

**ՎԵՆԵԼԻԱ,** լատ., — Նեպտոնի ամուսինը, իտալական

Հին ծովային աստվածուհի: Դիցաբանության մեջ համարվել է ծովագնացների հովանավորը, *M. C.*

**ՎԵՆԵՐԱ,** Հուն, — Հունական դիցաբանության Աֆրոդիտեն է, ոքը հոռմեական դիցաբանության մեջ Վեներա է, էրոսի մայրը, սիրո և գեղեցկության աստվածուհի, Դիցաբանության մեջ համարվել է այդիների ու այգեգործների խնամակալը: «Ի տես այդ փրփրածին Վեներայի անդիմադրելի հրապույրներին, բարձրացրին ահուելի աղմուկ», *Վ. Փ.*, հ. 1, 12

**ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ,** — Այս արտահայտությունը կապված է Վեներա դիցուհու անվան հետ, *Մ. Հ.*

**ՎԵՆՈՒՍ,** Լատ., — Հասկացվել է որպես Աֆրոդիտե, *ՅՈ Երբաս, 19*

**ՎԵՍՊԵՐ,** Հուն, — Ատլանտի եղբայրը կամ որդին: Երկնային աստղերի աստվածություն: Ոքես առավոտյան լուսաբացի աստղ կրել է ֆոսֆոր անունը: Հին հույները երկար ժամանակ շգիտեին, ոք երեկոյան և առավոտյան աստղային պլանետները նույն Վեներա պլանետն է: Այդ պատճառով էլ նոյն պլանետը կոչեցին երկու տարբեր անուններով, *M. C.*:

**ՎԵՍՏԱ,** Հուն, — Դիցաբանության մեջ հասկացվել է որուես ընտանեկան օջախի և կրակի աստվածուհի (Հույների մոտ կոչվել է Հեստիա): Վեստա աստվածուհու պաշտամունքը լայն տարածում էր գտել ժողովուրդների մեջ, ի պատիվ Վեստայի տոներ էին կատարվում, որոնք կոչվում էին Վեստալիա: Այդ տոներին սպասավորում էին Վեստալյան կույսերը: Հայկական դիցաբանության մեջ Վեստային համապատասխանում է Միհրը: Վեստալիայի անունով է կոչվել առաջին տաճարը, որ կառուցվել էր Հոռմում Այդ տաճարում, ըստ դիցաբանության, պահպանվում էր անմաս կրակ, և այդտեղից էր տարածվում սուրբ հուրը: Եղանակոր հույն կանայք բոկոտն էին գնում դեպի Վեստալյան տաճարը: «Թե Վեստան կսիրես, թող այդ մտադրությունը», *ՅՈ Երբաս 251*

**ՎԵՍՏԱԼՅԱՆ ՋՈՒՅՇԵՐ,** — Վեստալյան տաճարին սպասարկող կույսերը: Նրանք ըստ դիցաբանության, պարտավոր էին դիշեր-ցերեկ անմար պահել տաճարի մեջ վառվող

**Հուրբ:** Այս տաճարին ծառալելու էին գալիս 6—10 տարեկան աղջկները, առանց ֆիզիկական արատից նբանց ծառալութիւն ժամկետը սահմանված էր 30 տարի, 30-ամյա ծառալությունից հետո կույսը կարող էր հեռանալ տաճարից և ամուսնալ: Այդ կույսերը կրել են սուրբ և մարգարեական անուններ Եթե որևէ հանցագործ գատապարտված էր մահապատժի և նախքան մահապատժից հանդիպում էր Վեստալյան կույսի, անմեղ էր ճանաշվում և ազատ արձակվում: Այս կույսերը հագնում էին երկար ու սպիտակ հագուստ և ծածկում էին իրենց դեմքը: Մի օր, գասամիջոցին, շկարովաց այլևս դիմադրել մի անծանոթ ներքին մզումի, տներիս ծայրերին բարձրանալով հասա Վեստալյուն և համրուրեցի նրա հրաշալը ոտքեկի մատիկի ծայրը», Վ. Փ., հ. 1, 80

**ՎԵՐՏՈՒՆՈՒՄ** Հուն — Պատելազմնելի և ծառաստանների սատված Ըստ դիցարանության սրա ուղղա ամունքը լայն տալ ածում էր զակը ամբողջ Լոտությում: Նրան նվիրված տոնակաս արությունները կատարվում էին օգոստոսի 13-ին: Վերտունության դիցարանության մեջ ուտակերպած է մի երիտասարդի կերպարանքով այգեգործի գանուկով, ձևոքին մրգով զիմքը պատրիկ զամբյուղ, Մ. Ը

**ՎԻԿՏՈՐԻԱ,** Դատ, — Հաղթանակի աստվածուհի Ընդարձակ բացատրությունը տես Նիկե բառի տակ:

**ՎԻՅ,** Հուն — Ըստ դիցարանության մի ծերուկ էր, որի ունքերը և արտեսանունքները կախված էին մինչև զետին եթև դրանք վեր բարձրացներ և իր հույացքը հաւեր մի բանի, ապա նայվող իրը կամ կմեռներ, կամ կկործանվեր

**ՎԻՌԹՈՒԻՄ** (Վիրտուզ), Հուն, — Դիցարանության մեջ հասկացվել է որպես պատվի ու քաջության աստված, ռազմական փառքի ու հաղթանակի մարմնավորում Համարվել է Մարս աստծո ուղեկիցը «Մահու շափ վախենալ անարշեստ մի արհեստավոր լինելուց, թեկուզ մի Վիրտուզ, բայց անբովանդակ», Վ. Փ., հ. 1, 137

**ՎՈՒԴԱՆ,** Գերմ., — Հին սկանդինավցիների և գերմանացիների բարձրագույն սատվածք, Դիցարանության մեջ հասկացվել է որպես հայր բոլոր աստվածների:

**ՎՈՒԼԿԱՆ,** հուն., — *ՏԵՇԱ Հեթեստոս «Մի քանիսը  
պնդում էին, թե Վուլկանն է Յուպիտերի հրամանով քաղաքը  
ոչնչացնում»*, ՅՌ Երբաս, 469.

## S

**ՏԱԳԵՏ,** հուն., — Էտրուսական աստված, Յուպիտերի  
խոռը Քստ զիցարանության *Տագերը* գեղեցիկ տեսքով տղա էր  
և խիստ խոհական: Նա էտրուսցիներին իբր թե սովորեցրեց  
հսայության արվեստը:

**ՏԱԼԻԱՍԻՈՆ,** հուն., — Հարսանիքի աստված: Քստ  
առասպելի Երբ նորասուակները մոտենում եին տան շլմքին,  
կանչում էին՝ *Տալլասիոն*, M. C.

**ՏԱԼՈՍ,** հուն., — Քստ զիցարանության մի պղնձե  
հսկա էր, որ Կրետե կղզին պահպանում էր անսպասելի ներ-  
խուժումներից: Երբ արգոնավորդները (տես առ գոնավորդներ)՝  
մոտեցան այդ կղզուն և ցանկացան ափի դուրս գալ՝ ջուր վերց-  
նելու համար, *Տալոսը* թուլլ շտվեց, բայց կախարդ Մեղեան  
քուն բերեց նրա աշքերին և հսկան դետին տապալվեց: Այդ  
ժամանակ նրա մարմնի միակ արյունատար երակը խցանող  
մեխր դուրս ընկավ, և հերոսը արյունաքած էղավ ու մեռավ:  
«Հարված կապարի նման հոսեց *Տալոսի* արլունը», Կուն, 343

**ՏԱՑԳԵՏ,** հուն., — Ատլասի դուստրը՝ Դիցարանու  
թյան մեջ հիշատակվում է, որ *Տալգետը* իր ուսերի վրա պահուա  
էր երկնակամարը:

**ՏԱՆՏԱԼՈՍ,** հուն., — Զեսի որդին, Արգոսի արքան,  
Պելոսի և Նիորեի հայրը, Քստ զիցարանության աստված-  
ները *Տանտալոսին* լիառատ պարգևել էին ամեն ինչ, սակայն  
նա գոռողամիտ դարձավ և շարությամբ պատասխանեց աստ-  
վածների բարությանը: Զեսը այդ շարության համար նրան  
գցեց *Հաղեսը*: Հաղեսուն քաղցից ու ծարավից տանջահար  
կանգնած էր Տանտալոսը վճիռ ջրի մեջ: Զուրբ գրեթե հասնում  
էր նրա կղակին, Բավական էր միայն մի փոքր էռանար և նա  
կարող էր հագեցնել իր տանջալից ծարավը: Բայց *Տանտալոսի*

կոանալում պես ջուրը չքանում է, նրա գլխավերնում կախ էին ընկել պտուղներով ծանրաբեռնված ծառի ճյուղերը, բայց հենց որ նա ձեռքը մեկնում էր դեպի ճյուղը, վերջինս հեռանում էր: «Տանտալոսի գլխավերնը կախ էին ընկել պտղատու ծառերի ճյուղերը», Կուն, 162:

**ՏԱՆՏԱԼՈՍԱՆ ՏԱՆՉԱՆՔՆԵՐ** — Շատ մոտիկ գտնվող նպատակին չհասնելուց առաջացած տանջանքներ: «Եթե ծերուկը կոանում էր ջուրը խմելու, ջուրն իսկույն հեռանում էր», ՀԱ., 160:

**ՏԱՎՏԵՍՅԱՆ ԱՂՎԵՄ**, Հուն., — Անորսալի կենդանի: Ըստ գիցարանության այդ աղվեսին Պոսեյդոնն էր ուղարկել թերեցիներին: Ծուրաքանչյուր ամիս մի պատանի էր զոհաբերվում այդ աղվեսին, որպեսզի հանգարտվեր նրա կատաղությունը: Աղվեսին հետամուտ եղավ Կեփալոսի Լայլապոս շումը, որը արագավազ էր, բայց Զևսը երկուսին էլ բար դարձրեց, Կուն 246:

**ՏԱՐՏԱՐՈՍ**, Հուն., — Եթերի և Երկրի որդին: Ահավոր մի անդունք լեցուն հավերժական խավարով: Տարտարոսը համարվել է Քրոնոսի և տիտանների ստորերկրյա բանտը: Նրա գարպասները փակված էին պղնձաձույլ փականներով: «Կնետեմ... Տարտարոսը խավարամած», ՀԻ., 158:

**ՏԱՅԻՏԱ**, լատ., — Լոռւթյան աստվածուհի, M. C.:

**ՏԵՂԵՎՈ**, Հուն., — Տե՛ս Դիօմեդես, ՀԻ., 99:

**ՏԵԹՅՈՒՆ**, Հուն., — Ուրանոսի և Երկրի գուստը, Օվկիանոսի կինը, մայրը բոլոր ջրերի ու գետերի: «Նա մայրն էր համարվում բոլոր ջրերի և գետերի», Հոդը, 365.

**ՏԵԼԱՄՈՆԻԴ** (Այաքս), Հուն., — Ըստ գիցարանության Աղիսեսի հետ ըմբշամարտի գուրս եկավ: Երկուսն էլ շնորհիվ իրենց հավասար ուժերի, մնացին անպարտելի: Նրանք արժանացան սլարդելի: Երբ Աքիլեսը մահացավ, նրա զենքերը արժանի էին կրելու միաւն Տելամոնիդը և Աղիսեսը: Բայց Ագամեմնոնն ու Սենելայոսը այնուես արեցին, որ զենքերը բաժին ընկան Ողիսեսին: Երբ հունական բանակը խոր քուն էր մտել, վրիժառությամբ լցված Տելամոնիդը սուրը ձեռքին մտավ Սգամեմնոնի մոտ և ցանկացավ սպանել թե՛ նրան, թե Մե-

նելալոսին, բայց Սթենաս Պալլասը խենթացոեց նրան, Տւշ-մոնիդը սուրն իր սիրտը խոցեց և ընկավ փրփրածուփ ծովի ափը: «Ծովի ափին Տեկրոսը գտավ Այաքսի գիտակը», Կուն, 487:

**ՏԵԼԵԳՈՆ,** Հուն., — Ոգիսնսի և Կիրկեի որդին: Դիցա-րանության մեջ ասվում է, որ Տելեգոնը գուրս եկավ իր հորը որոնելու, Ճանապարհին իջավ իթակե կղզին և սկսեց ավիրել այն: Ոգիսնսը, որ այդ ժամանակ գտնվում էր այդտեղ, գուրս եկավ Տելեգոնի գեմ: Զճանաշելով իր որդուն, մարտի րռնվեց նրա հետ, բայց մահացու վերք ստացավ որդուց: Կատարվեց կանխագուշակությունը՝ Ոգիսնսը մահ կստանա իր որդուց, *M. C.*

**ՏԵԼԵՄԱԿ,** Հուն., — Ոգիսնսի և Պենելոպեի որդին: Աթենաս Պալլասի խորհրդով, ինչպէս ասված է դիցարանու-թյան մեջ, գուրս եկավ որոնելու իր հորը: Սթենասը Մենտորի կերպարանքով ուղեկցում էր նրան: Երբ Տելեմակը հյուր եղավ Մենելայոսի մոտ, սա հայտնեց Ոգիսնսի տեղը: Ոգիսնսը այդ ժամանակ գտնվում էր Կալիպսո հավերժահարսի մոտ: Որդին գտնում է հորը, և միասին վերադառնում են հայրենիք: «Միմիան խցիկին պատուհանից կարողացա գիտել Կորնթոսի ոլարանոցը, Տելեմակի կղզին», Վ. Փ., 6. 1. 75

**ՏԵԼԵՍՖՈՐ,** Հուն., — Առողջության աստված: Ըստ դիցարանության Ասքլեպիոսի հետ բուժում էր աստվածներին, *M. C.*

**ՏԵԼԵՓՈՍ,** Հուն., — Հերակլեսի և Ավգեի որդին: Դիցա-րանության մեջ հիշատակվում է, որ Տելեփոսը մի ընկեցիկ էր, որին խնամեցին եղջերուները: Պիթիա քրմուհին ընկեցիկին հայտնեց, թե ով է նրա մայրը: Նա գտավ իր մորը և վերջում գարձավ Միսիայի թագավորը: Հունական բանակը կորցրել էր Տրոյայի Ճանապարհը, իսկ այդ ճանապարհը գիտեր միայն Տելեփոսը, բայց վերջինս էլ հեռու էր բանակից: Տելեփոսը վիրավորվել էր Աքիլլեսի նիզակից և տառապում էր անբուժելի վերքից: Պիթիա քրմուհին հայտնել էր, որ այդ վերքը կրուժի միայն Աքիլլեսը: Մուրացիկի կերպարանքով Տելեփոսը եկավ Ազամեմնոնի մոտ, որի միջնորդությամբ Աքիլլեսը բուժեց նրա վերքերը: Ի հատուցումն այդ բանի, Տելեփոսը ցույց տվեց

*Տբոյալի ճանապարհը:* ռԱնմիջապես քերեցին Արիլեսի տեղի ծայրը, նրա փոշին ցանեցին Տելեփոսի վերքի վրա, և վերքն ապաքինվեց, Կուն, 371:

**ՏԵԼՈՒԵՐԱ,** լատ., — Հին իտալական մայթ երկրի աստվածուհի: Դիցարանության մեջ հասկացվել է որպես երկրաշարժի աստվածուհի: Օրբեմն նբան գիտել են որպես կյանքի և մահու աստվածուհի: Պատկերվել է նաև որպես ամուսնության ու սկզբարերության հովանավոր, M. C.:

**ՏԵԼՈՊՈԼԵՄ,** հուն., — Հերակլեսի թոռը, Մարտի դուրս Էկակ Սարսկեղոնի գեմ և սկարտություն կրեց, ՀԻ, 121:

**ՏԵՄԻՍՏՈՍ,** հուն., — Աղամանդի կինը Ըստ դիցարանության Տեմիստոսը ամուսնացավ Աղամանդի հետ, կարծելով, թե նրա կինը իոն, մահացել է: Բայց հետո հալտնի գարձավ, որ իոն կենդանի է և ապրում է Պատնս սի մի քարտնձու վում: Տեմիստոսը իրի խարված դանկացավ վրիժառու լինել ամուսնուց: Նա հրամայեց ստրկուհուն ոյ իր մոտ գտնվող իոյի զավակներին ագցնի սև հազուստ, իսկ իր երեխաներին հակառակ գույնի հագուստ: Գիշերովա շամանդադին կատարվեց հակառակը: Ստրկուհին, որ ինքը Էոն էր, երեխաներին հազցրեց հակառակը: Տեմիստոսը սպանեց իր երեխաներին, իսկ երբ բացվեց զազտնիքը, վերջ տվեց նաև իր կյանքին:

**ՏԵՎԿՐՈՍ,** հուն., — Սկտումանդրոսի որդին, Տելամոնիդ Ալաբսի եղբայրը: Դիցարանության մեջ հիշվում է, ուն իրս սա է լզել Տրոյալի առաջին թագավորը: Նրա անվամբ էլ կոչել են Տեվկրոսան, Կուն 420:

**ՏԵՐԵԶԻԱՍ,** հուն., — Թերե քաղաքի հոչակավոր կույր գուշակը: Էիցարանության մեջ ասվում է, որ իրը սա կարող էր հասկունալ թոշունների լեզուն: Միայն Տերեգիասին բայ տվիճակվեց Հաղեսի խավարամած աշխարհում սպահանել եր դիտակցությունը: «Մինչեւ յուս զու լորհուրդը Տերեգի աս պատգամախոսի», ՀՈ., 143: «Տերեգիասը կարողանում էր հասեանալ թոշունների լեզուն», Հոդը., 380:

**ԵՐՄԻՆԻԱԾ,** հուն., — Մահմանների, հողի, սահմանային սշանների, սյուների ու քարերի աստված: Ըստ դիցարա-

**Նության Տերմինոսի պաշտամունքը հիմնադրեց հոռմեական Նումա-Պոմպիլի ցարը, M. C.**

**ՏԵՐՊՍԻՔՈՐԾ, Հուն., — Պարերի մուսան, որը դիցաբանության մեջ պատկերված է սրինգը ձեռքին, Կուն, 46.**

**ՏԻԹՈՆՈՍ, Հուն., — Լաոմեդեի որդին: Ըստ դիցաբանության այնքան գեղեցիկ էր, որ նրան սիրահարվեց Արշալույսը և առևանգեց: Տիթոնոսը աստվածներից անմահություն ստացավ, բայց սոսացավ խնդրել նաև հավերժ երիտասարդություն: Ուստի ծերացավ նա, աստվածները խղճացին նրան ու ճպուռ դարձրին, 20 366**

**ՏԻՆԴԱԲԵՎՈ, Հուն., — Սպարտայի արքան, որը, ըստ դիցաբանության, ամուսնացավ Լետոյի հետ և Հերակլեսի օգնությամբ վերադառնալով Սպարտա վերահաստատեց լրիշխանությունը: «Մեկը մյուսի հետեւից Տինդաբեսի պալատն էին գալիս փեսացուները հարսնախոսելու շքնաղ Հեղինեին», Կուն 352**

**ՏԻՏԱՆ, Հուն., — Գեայի և Ուրանոսի որդիները, որոնք, ըստ դիցաբանության, աշխարհը տիրելու համար պայքարի դուրս եկան օլիմպիական աստվածների դեմ: Զեսը պարտության մատնեց նրանց և զցեց Հաղեսի խավար աշխարհը: Գեան շատ զայրացավ օլիմպիացի Զեսի վրա, որ նա այդքան անողոք վարվեց պարտված տիտանների հետ:**

*Դու հնչեցիր Պառնասում,*

*Երբ Արամազդ հաղթական*

*Տիտանները քշեց երկնքից*

*Գեպի անդունդ անսահման»), Մ Ն, 27*

**ՏԻՏԻ, Հուն., — Գեալի որդին: Ըստ դիցաբանության, երբ Լետոն Դելֆիք զնաց, Տիտին կամեցավ այպանել նրան: Այդ բանի համար ամպրոպային Զեսը Տիտիին կայծակնահար արեց և Հաղեսը զցեց: «Երկու ցին անընդհատ կրծում էին նրա լյարդը», M. C**

**ՏԻՐԵՆՅԱՆ ԾՈՎԱՀԵՆՆԵՐ, — Ըստ դիցաբանության Դիռնիսոսը մի օր լազուր ծովափին կանգնած՝ հիանում էր քնության գեղեցկությամբ, լրի հանկարծ ափին մոտեցավ մի նավակ: Նավակից դուրս եկան նավորդները (տիրենյան ծովա-**

հենները), որոնք առևանգեցին գեղահրաշ պատանուն և դուրս եկան բաց ծով։ Երբ շղթայեցին գերված Դիոնիսոսին, շղթաները նրա մարմնի վրայից ցած թափվեցին։ Ծովահենները զգացին, որ աստծո են գերել։ «Դիոնիսոսը նրանց դելֆիններ դարձրեց», Կուն, 108.

**ՏիՌՈ,** հուն., — Էսոնի մայրը, Պոսեյդոնի սիրուհին, Հստ առասպելի Տիրոյի և Պոսեյդոնի սիրո գգվանքից ծնվեցին Պելիանը և Հելիան, ՀՈ, 19

**ՏիՌՈ,** հուն., — Դիցաբանության մեջ պատկերվել է որպես Դիոնիսոս աստծո գալազանը զարդարված խաղողի ողկուզներով և տերևներով, Ա. Ը

**ՏիՓՈՆ,** հուն., — Երկրի և Տարտարոսի որդին, Հստ դիցաբանության 100 դիխանի մի հրեշտ Գեան Զեսից վրեժ առնելու համար, որ նա իր որդիներին դցել էր Հադեսը, ամուսնացավ Տարտարոսի Հետ և ծնեց Տիփոնին։ «Քուլաքուլաբոց էր արծակում իր շուրջը Տիփոնը», Կուն, 24։ «Տիփոնը տիտաններից սեկն էր իբրև սպատկերացում ստորերկրյա հրաբխային ուժերի», Հոդը 366

**ՏիՋԵ,** հուն., — Օվկիանոսի դուստրը ճակատադրի, երջանկության ու բարօրության աստվածուհին, Դիցաբանության մեջ պատկերված է առատության եղյուրը ձեռքին մարդկանց նվերներ պարզնելիս։ «Օլիմպիոսում է և ճակատադրի աստվածուհի Տիքեն», Կուն, 29

**ՏԼԻՊՈԼԵՄՈՍ,** հուն., — Հերակլեսի որդին, Դիցաբանության մեջ հիշատակվում է, որ սա Սարսկեդոնի նիզակից խոցված ընկավ մարտի դաշտում, Կուն, 408

**ՏՄՈԼ,** հուն., — Հոդի աստված, Օմփալոսի ամուսինը, Տանտալոսի հայրը, Հստ դիցաբանության դատավոր էր կարգված Ապոլլոնի և Պանի՝ սրնգահարության մրցակցությանը, Ա. Ը...

**ՏՐԻՊՏՈԼԵՄՈՍ,** հուն., — Հոդագործության աստված, Պելեսոսի ուրիշն։ Դիցաբանության մեջ հիշատակվում է, որ Դիմետր գիցուհին Տրիոլոլեմոսին ցորենի սերմ տվեց, և նա առ յինը եղավ, որ սերմը գցեց վարած հովի մեջ։ «Տրիպտոլե-

մոսը շրջեց քոլոր երկրները և ամենուրեք մարդկանց երկրագործություն սովորեցրեց», Կուն, 85:

**ՏՐԻՏՈՆ**, հուն., — Աֆրոդիտեի և Պոսեյդոնի դուստրը, ծովային աստվածուհի, հավերժահարս: Դիցաբանության մեջ հիշվում է, թե իբր Տրիտոնը խեցեղեն փողի հնչյուններով

ահեղ փոթորիկներ էր առաջ բերում: Պատկերված է որպես երկէություն՝ վերևի մասով մարդ, ցածի մասով ձուկ: Ապրում էր ծնողների հետ ծովի հատակում: Ճնրանց մեջ էր նաև Պոսեյդոնի որդին՝ Տրիտոնը, Կուն, 30:



Նկ. 13 Տրիտոնի մոս:

Պոնտոսի հարավային ափին և ծալվալվել է մինչև Սկամանդրոս զետքը Տրոյան հիմնադրել է իլիոնը: «Դուք կործանեցիք հեքիաթի Տրովադան», Ե. Զ., 462:

**ՏՐՈՒ**, հուն., — էլեքթրոնի որդին, Պրիամոսի նախահայրը, Տրոյայի առասպելական հիմնադիրը, Հի., 111:

**ՏՐՈՓՈՆԻ ԵՎ ԱՀՄԵԴ**, հուն., — Դիցաբանության մեջ սրանց անվան հետ է կապվում Ասկոլոնի տաճարի կառւղումը Դելիփիքում, Պոսեյդոնի տաճարը Մանտենեսում, Ավգիա հրաշալիքը՝ Լեդեսում և այլ նշանալոր կառույցներ, Մ. Ը.:

## 8

**ՑԵՐԲԵՐ**, հուն., — *Sb'* ս Կերբեր, Վ. Փ., 6. 1. 91.

**ՑԵՐԵՐԱ**, լատ., — Մայր երկրի դիցուհի, Մ. 2:

**ՑԵՐՑԵԱ**, հուն., — *Sb* ս Կիրկե:

**ՑԻԿԼՈՊ**, հուն., — *Sb'* ս կիկլոպ:

## ՈՒ

**ՈՒԼԻՍ,** հուն .,— Տես Ողիսես «Արպես Լայերտի որդին, որպես Ռուկիս անցած ծովեր ու ցամաքներ», Վ. Տ., 277:

**ՈՒԲԱՆԻԱ,** հուն .,— Աֆրոդիտեի կրկնակ անունը: Դիցաբանության մեջ համկացվել է նաև որպես աստղաբաշխության մուսա, Ս. Ն., 17

**ՈՒԲԱՆՈՍ,** հուն .,— Գեայի ամուսինը: Գեան և Ուրանոսը ունեցան 6 դուստր, 6 ուստր, որոնք դիցաբանության մեջ կոչվում են կիկլոպներ: «Հզոր ու ահեղ տիտաններ ունեին Ուրանոսն ու Գեան», Կուն, 19

## Փ

**ՓԱՅԵԹՈՆ,** հուն .,— Հելիոսի և Կլիմենեի որդին Ըստ դիցաբանության Փայեթոնը խնդրեց Հորից, ոլ խույ, ու սակայնուռ երկանվով սլանալ երկնակամարով: Չնայած սյահանգը ծանր էր, բայց հայրը շմերժեց Սրկնակամարով սուրացող կառքը կորցրեց իր ճանապարհը, և ծիերը ընդհուպ մոտեցան Կարիճ համաստեղությանը: Փայեթոնը սարսափած Ռողեց երասանակները: Զիերը իրենց ազատ զգալով, մոտեցան երկրին, Ճած իջած երկանվի բոցերը լափեցին երկիրը, և ամեն ինչ բոցավառվեց: Զորացան ծովերն ու գետերը, և ահավոր շոգը թափանցեց Հադեսի խավարամած աշխարհը: Գեան բարձրածայն իր ավերսն ուղղեց Զեսին և խնդրեց փրկել երկիրը: Ամպրոպային Զեսը կայծակնա՞ար արեց երկանիվը, և բոցավառվող Փայեթոնը վայր ընկավ էրիդանոս գետի ալիքների մեջ: Փայեթոնի քույրերը հելիադները, դառնագին լրացին իրենց լզրոր մահը: Խաց ող հելիադներին մեծ աստվածները և ուրդիներ դարձրին Ըստ դիցաբանության լացող հելիադը բարդիներից կաթող արցունք-խեժը կաթում է էրիդանոսի զբերի մեջ, և սառչող խեժը թափանցիկ հակինթ է դառնում: Ամունձը ծիսի մեջ Փայեթոնը չի իմանում, թե ուր է գնում»:  
Կուն, 93

**ՓԱՅԵՆԱ,** Հուն., — Հույսի աստվածուհի, քարիտայ-քից (տես և Տարիտներ) մեկը, որ Հիշվում էր Աթենքում

**ՓԱՌՆ,** Հուն., — Աստվածային բժիշկ: Հստ դիցաբանության Զևսը կանչեց Փառնին և ապաքինել տվեց Արեսի վերքերը, Կուն, 409

**ՓԱՎՆ,** լատ., — Պիկայի և Պոմոնի որդին: Հովիվների ու Հոտերի Հովանավոր աստվածը: Հստ դիցաբանության Պան աստծո պես թափառում էր անտառներում և հաճախ վախեցնում անցորդներին: Գիտեր գուշակել դալիքը, *M. C.*

**ՓԵԱԿՆԵՐ,** Հուն., — Առասպելական ժողովուրդ: Աշխարհատես Ոդիսեսը շատ զարմացավ, երբ ոտք դրեց փեակների երկիրը: «Փեակներ՝ առասպելական ժողովուրդ, որոնց կղզին, ըստ Հույների, գտնվում էր ինչ-որ տեղ, ծովի ծայրակմուտքում», Կուն, 516

**ՓԵԲՈՍ,** Հուն., — Հստ դիցաբանության համարվել է կյանքի և լուսու տերը: Ապոլլոնի կրկնակ անումը: «Այսպես ասաց աղերսավոր, լսեց Փեբոս-Ապոլլոնը», Հ. Հովին., 388:

**ՓԵՆԻՔՍ,** Հուն., — Ծվլոպայի եղբայրը, թեսալական Ամինտոր արքայի որդին: Հստ դիցաբանության եզել է Աքիլեսի դաստիարակը և նրան սովորեցրել է պերճախոսություն ու ուազմական գործ: «Այսոն այնժամ աշքով արեց ժեր Փենիքոն», ՀԻ, 180 «Իբր թե այժմ Փենիքոը լույս է ընկել Վերին Ծգիպտոսում, մի բան, որ պատահում է 500 տարին մեկ անգամ», ՅՈ Երբաս, 80

**ՓԵՐԻ,** — Հավերժակարս: Հստ դիցաբանության փերիները համարվել են մարդկանց պահապան Հրեշտակներ: «Ճաննաթի փերի էր, կին չէր», Ե Պ, 411

**ՓԵՐԻԿԼԵՍ,** Հուն., — Հստ դիցաբանության այն նավի կառուցողը, որով Պարիսը առևանդեց Հեղինեին: Փերիկլեսը ձեռքով կերտել գիտեր ամեն տեսակ հրաշալիք, «Ճարկեց Մերիոնն Հարմոնիդես Հյուսնի որդուն՝ Փերիկլեսին», ՀԻ, 105:

**ՓԵՐՈՒՆԻԱ,** լատ., — Գարնան և ծաղիկների աստվածուհի, *M. C.*

**ՓԻՂԵՍ,** լատ., — Հավատարմության աստվածուհի:

Դիցարանության մեջ պատկերված է երիտասարդ կնոջ կերպարանքով՝ հասկը և պտուղը ձեռքին, Ա. Ը.

**ՓԻԼԱՐԱ,** Հուն, — Հավերժակարս, Կենտավլոս Քիրոնի մայրը, Ա. Ը

**ՓԻԼՈԿՏԵՏԵՍԵՍ,** Հուն, — Հերակլեսի ընկերը։ Ըստ դիցարանության միայն Փիլոկտետեսը գիտեր Քրիստ կղզու զոհարանի տեղը, և նա հույներին առաջնորդեց դեպի այդ զոհարանը զոհ մատուցելու հավերժակարսին, որովհետեւ կանխագուշակված էր, որ հույները Տրոյան կղբավեն այն գեղքում միայն, եթե ճանապարհին Քրիստ կղզում զոհ մատուցեն։ Նոր էին մոտեցել զոհասեղանին երբ դուրս սողաց զոհարանի պահապան օձը և խալթեց Փիլոկտետեսին վերջինս այդ խալթից անբուժելի վերք ստացավ, որից սկսեց գարշահոտություն տարածվել։ Հույները Փիլոկտետեսին թողեցին մի տմայի դաշտում։ Մակար տառ տարի հետո ստիպված Եղան նորից իրենց մոտ բերել Փիլոկտետեսին, քանի որ նրա մոտ էր Հերակլեսի նետն ու ազնով։ Ըստ տուապելի սուանց արդ նետ ու ազնով հնարավու չէր Տրոյան որավել։ Մաքավոն բժիշկը ապաքինեց Փիլոկտետեսի վերքերը։ «Զոհարանը հսկող օձը իայթեց հերոս Փիլոկտետեսին» Կուն 376

**ՓԻԼՈՄԵԼ,** Հուն, — Հունական դիցարանության մեջ Հաւելացվել է որպես սոխակ Ա. Ը

**ՓԻԼՈՄԵՆ ԵՎ ԸՍԿԿԻՍ,** Հուն, — Սլրութ աւուելուներ։ Ըստ դից սբանության ու բանք կերակրեցին ծովայալ Ջեսուս, երբ նա շրջապայռում էր աշխարհը, Ա. Բ., 45։

**ՓԻՆԵՎԱ,** Հուն, — Ագենորի որդին, Թրակիայի նույնի թագավորը։ Ըստ դիցարանության Ապոլոնը Փինեսին զրկել էր տեսազությունից, որովհետեւ նո Ջեսուս դաշտանիքները հայտնել էր մարդկանց։ Աստվածները նրան զրկեցին նաև ջրից ու աննդիբց։ Երբ ծերունին ու զան էր բաց տնօւմ, աստծո հրամանով հարիստաները՝ կիսագի կիսաթռչուններ, գալիս էին նրա մոտ, խժուում նրա սեղանի վրա գրված ուտելիքը, գարշահությամբ լցնուած բնակտրանն ու հեռանում։ Երբ արգոնավորդ չ' ըր Փինեսի սոս հյուր Եղան, նրանք տեսան թէ ինչպես ուստրանաված սեղանի բարիքը անմիջապես խժուցին արդ

թոշունները և հեռացան։ Արեսի որդիները՝ Զեթոսն ու Կալիդոսը, Հետապնդեցին այդ թոշուններին, մանավանդ, երբ իմացան, որ Փինևսը իրենց քարեկամն է և ամուսնացել է իրենց քրոջ Հետ։ Մոտալուս էր թոշունների կործանումը, եօր երիսը ներկայացավ նրանց և ասաց՝ «Աստվածները պատվիլ ել են Հարիպաններին այլևս չվերադառնալ Փինևսի մոտ»։ Մի այլ վարիանտում պատմվում է, որ Փինևսը լքեց առաջին կնոջը՝ Կեռուպատրային և ամուսնացավ իդեայի Հետ։ Վերջինիս պահանջով Փինևսը կուրացրեց նախկին կնոջ երկու որդիներին։ Այս արարքի համար Զեսը պատժեց նրան և առաջարկեց կամ մահ, կամ կուրացում։ Փինևսը նախընտրեց կուրացում։ «...արդոնավորդները Փինևսի համար նորից ճոխ սեղան բաց արին», Կուն, 324

**ՓԼԵԳԻԱՑԻՆԵՐ,** Հուն, — Արեսի որդիները։ Հստ գիշաբանության Փլեղիասը՝ Արեսի որդիներից մեկը, այրեց Դելփիքում գտնվող Ապոլլոնի տաճարը, որի պատճառով Ապոլլոնը սպանեց նրան։ Մի այլ վարիանտում պատմվում է, որ Զեսը պատժեց նրան և զցեց Հաղեսի աշխարհը՝ անվախան տանջանքներ կրելու, Մ Ը

**ՓԼՈՐԱ** (Ֆլորա), լատ., — Ծաղիկների աստվածուհի։ Փլորա աստվածուհու պատվին կատարված տոնակատարությունները տեղի են ունենում ապրիլի 23-ից մինչև մայիսի 3 ըստ դիցաբանության մարդիկ հաղնում էին ծաղկագույն շորեր և իրենց մազերի մեջ դնում ծաղիկներ։ Անտիկ արվեստում Փլորան պատկերվել է երիտասարդ աղջկա կերպարանքով ծածկված ծաղիկներով, ձեռքին ծաղիկ, Ս Մ

**ՓՅՈՒՆԻԿ,** Է գի պլ, — Սրեգակնահավ հրահավ, աՄի առասպելական թոշուն, որը 500 տարի ապրում էր և ապա իր իսկ պատրաստած խարույկի վրա այրվում ու իր մարմնի մոխրի միջից երիտասարդացած կրկին հարություն առնելու», Մ Հ

«Ու մնացած մոխրը ձիգ պիտի այրեն նրանք նորից,  
Որ կյանքը հին որպես վիունիկ, չբարձրանա մոխրներից», Ե Զ 956.

**ՓՈԲՈՍ,** Հուն, — Արեսի և Աֆրոդիտեի որդին, զախը

**աստված:** Նա գուրս էր գալիս միայն հոր հեա և համարվել է նրա զինակիցը, «Նրա հետեւից սուրում են որդիները՝ Դենոսը ու Փորոսը ...», Կուն, 63:

**ՓՄԻՔԵ,** Հ ուն., — Մարդկային հոգու կերպարանացում հույների մեջ, Գեղարվեստի մեջ ներկայացված է թիթեռնիկի թևեր ունեցող նազելի աղջկա կերպարանքով, ՅՈՒ ԵՐԱՍ, 44

**ՓՐԻՔՍՈՍ,** Հ ուն., — Ամպերի աստվածուհի, Նեփելեի և Աթամասի զավակը: Ըստ դիցարանության Աթամասը իր երկրորդ կնոջ՝ Իոյի պահանջով կամեցավ սպանել իր առաջին կնոջ երկու որդիներին՝ Հելլային և Փրիքսոսին: Երբ այս մասին իմացավ Նեփելեն, երեխաներին նստեցրեց ոսկեղեղմ ոշխարի վրա ու փախցրեց: Ծովի վրայով անցնելիս Հելլան ծովն ընկավ, և այդ ժամանակից ծովը կոչվեց նրա անունով՝ Հելլես-Պոնտոս: «Զկարողացավ փրկել քրոջը Փրիքսոսը», Կուն, 310

## ¶

**ՔԱԼԿԻՍ,** Հ ուն., — Հեփեստոսի կրկնակ անունը:

**ՔԱՌՈՍ,** Հ ուն., — Սստված, որ ապրում էր մթության մեջ որի պարհառով նրա կերպարանքը նկարագրել հնարավոր չէր: Ըստ դիցարանության Քառոսից է սկիզբ առնում ամեն ինչը: «Ամենից առաջ գոյություն է ունեցել Քառոս, նրա մեջ էր ամփոփված աշխարհի կյանքի աղբյուրը», Կուն, 19

**ՔԱՐԻԲՈՒՍ,** Հ ուն., — Ծովային Հրեշ: Ըստ դիցարանության ծովի ափին նստած՝ ալիք էր կուլ տալիս, իսկ երբ ջուրը ետ էր ժայթքում նրա բերանից, ծովն ամբողջովին եռում էր: «Այսպիս փրկվեցի ես Քարիբուսի Հրեշավոր երախից», Կուն 542

**ՔԱՐԻՍՆԵՐ,** Հ ուն., — Գեղեցկության ու նազանքի աստվածուհիներ: Ըստ դիցարանության թվով երեքն են, որոնցից մեկը Հեփեստոսի կինն է, Քարիսները զվարճացնում էին աստվածներին իրենց երգով ու կաքավով: Աստվածները զվարճանում էին նրանու թեթևասահ շարժումներով և հավերժ գետատի ու շքնուղ զեղեցկությամբ: «Գեղեցիկ քարիսներն ու

մուսաները զվարձացնում էին նրանց (աստվածներին)», Կոմ, 77

ՔԱՐԻՑՆԵՐ, Հուն, — Զնսի և Հերայի աղջիկները Բստ հունական դիցարանության հասկացվել են որպես նաղելիության, ընկերական վայելքների և ուրախ կյանքի ու զվարճության աստվածուհիներ: «Քարիտների սպիտակ աղդրերը վկա», ՅՈ Երթաս, 9

ՔԱՐՈՆ, Հուն, — Էրեթոսի և Գիշեր աստծո որդիներիցարանության մեջ ասվում է, որ Քարոնը Ստիքս գետի վրա նավավար էր և մեռածների Հոդիները փոխադրում էր դժոխքը և Սպասում էր նոր եկվորին Քարոնը ու Ստիքսի մոտ», Հռվի. Քումանյան, 6 1, 230

ՔԵԼՈՆ, Հուն, — Մի կին, որը, ըստ առասպելի, չուղեց ներկա դոնվել Զնսի ու Հերայի հարսանիքին և այսլանեց նրանց: Այս վարմունքի պատճառով Հերմեսը Քելոնին կրիա դարձրեց:

ՔԵՐՈԲ, փոյտուգիական թագավոր, Դիցարանության մեջ ասվում է, որ Քերորը խնդրում է Կասանդրայի ձեռքը, բայց մարդարեուհին մերժում է նրան՝ կանխադրուշակելով նրա մոտալուտ մահը, Շիլլեր, Բալադներ, Երևան, 1957 թ

ՔԻՄԵՐԱ, Հուն, — Իփոնի և էքիդնայի որդին, ահասարսուու հրեշտ: Բստ դիցարանության Քիմերան դիմացից առյուծ էր, միջամասում՝ լեռնային վայրի այծ, իսկ ետևից՝ վիշապ Հուր էր ժայթքում նրա երեք երախոից: Ուներ երեք դլուխ՝ առյուծի, այծի և վիշապի: Միայն Եհվերի ֆոնին հաջողվեց սպանել այս հրեշտին, այն ել Պեգասի օգնությամբ: «Աստվածածագ էր Քիմերան, գլխով առյուծի, իսկ ետևից վիշապի էր նա, այծենի էր միջամասը նրա մարմնի», Հի 134

ՔԻՐՈՆ, Հուն, — Կրոնոսի և Օվկիանոսի որդին: Մի ահանդի բեղ սարդու և ձիու խառը կերպարանքով: Դիցարանության մեջ համարվել է օրենքների ու դատաստանների, երդումների ու գոհերի ուսուցիչը Քիրոնը դարձավ Աքիլլեսի դաստիարակը: «Վերքի վրա դեղիր ցանեց նա հմտորեն, ինչու Քիրոնն էր ուսուցել ...», Հի, 95

**ՔԼՈՐԻՍ**, Հ Ա Մ ,— Ծաղիկների աստվածուհի, Զեսի հարճը, «Ինձ երկաց լքնաղ Քլորիսը», ՀՈ , 152

**ՔՍԱՆԹՈՍ**, Հ Ո Ւ Ն .,— Դիցարանության մեջ հասկացվել է որպես Աքիլլեսի կառքին լծված նժույգ, որին Հերան խոսելու և գուշակելու կարողություն էր տվել. Քսանթոսն էր, որ գուշակեց Աքիլլեսի մահը: «Հանկարծ գլուխով հակելով, մարդկային ձայնով Աքիլլեսին դիմեց Քսանթոսը», Կուն, 456

**ՔՐԻԶ** (Քրիսոս), Հ Ո Ւ Ն ,— Ապոլլոնի քուրմը, որի աղջկան, ըստ դիցարանության, զերի էր վերցրել Ագամեմնոնը: «Ճորքն էր ջնջվում, քանզի Աթրիդն անարգել էր քուրմ Քրիզին» ՀԻ , 35

**ՔՐԻՍԵ**, Հ Ո Ւ Ն .,— Հավերժահարս: Հստ դիցարանության հույները Քրիսեի զոհասեղանին զոհ մատուցեցին՝ Տրոյայի ափերը հաջող գուրս գալու համար: Այդ զոհասեղանի մոտ օձը խայթեց Փիլոկտետեսին: «Այսուղ զոհարան կար դրված ի պատիվ կղզու հավերժահարս Քրիսեի», Կուն, 376:

**ՔՐԻՍԻՊՈՍ**, Հ Ո Ւ Ն .,— Աքսինի հավերժահարսի և Պետրոսի սրդին: Հիպոդամայի հորդորով սովանեցին նրան, Կուն, 302

**ՔՐՈՆՈՍ**, Հ Ո Ւ Ն .,— Զեսի հայրը, Ռերանոսի որդին, ժամանակի աստվածը, Ընդարձակ բացատրությունը տես Զես բարի բացատրությունը:

## Օ

**ՕԳԻԳԻԱ**, Հ Ո Ւ Ն .,— Հստ դիցարանության այն կղզին է, ուր ասլրում էր կախարդ Կալիպսո հավերժահարսը որի մոտ ութ տարի մնաց Ռդիսեսը «Երկար թափառումներից հետո Ռդիսեսը ընկավ Սգիդիա կղղին», Կուն, 503:

**ՕԴԻՆ**, Հ Ո Ւ Ն .,— Սկանդինավյան ժողովուրդների գլխավոր աստվածը սրբ, ըստ դիցարանության, իր ամեն մի իմաստությունը ասնում էր իմաստության աղբյուրից: Սա է ստեղծել աշխարհը և առ և հովանավորում նրան, Մ 2

**ՕԶԻՐԻՍ**, Լ Ո Ւ Խ Ա ,— Դիցարանության մեջ հասկաց-

վել է որպես արևի աստված, որին վերագրում են ժամանակի ստեղծումը, Ելլեր, Բալլադներ, Երեան, 1957 թ.:

**ՕԹՈՍ ՌԻ ԷՓԻԱԼՏԵՍ**, Հուն., — Ալուսի զավակները, որոնք, ըստ դիցաբանության, զոհ դարձան Ապոլլոնի զայրույթին: Նրանք երկու ամիս շղթայակապ պահեցին Արեսին, որն ազատվեց միայն Հերմեսի շնորհիվ: «Որոնց զոհ գնացին նաև Օթոսն ու էփիալտեսը», Կուն, 47

**Հ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ**, — Համահունական տոնախրժմարություններ, որոնց ժամանակ Հունաստանում տիրում էր ընդհանուր խաղաղություն: Խաղերի ընթացքում տեղի էին ունենում վազքի, ըմբշամարտի, բռնցքամարտի, սկավառակի ու տեղի նետման, ինչպես նաև երկանվի վազքի մրցություններ: Խաղերի մեջ հաղթանակ տանողները որպես պարգև ստանում էին ձիթենու պսակներ և մեծ պատվի արժանանում: Հույնությունների օլիմպիական խաղերը տևել են մինչև մ.թ. 393 թիվը: Այդ խաղերը արգելվեցին թեղոս կայսրի կողմից, որպես քրիստոնեության հետ անհամատեղելի երկույթ: 30 տարի անց թեղոս երկրորդը կրակի մատնեց Զևսի տաճարը Օլիմպիայում և այդ վայրը զարդարող շքեղ շինությունները, որտեղ տեղի էին ունենում խաղերը, Կուն 201.

**ՕԼԻՄՊԻՌՍ**, Հուն., — Բարձրաբերձ սար, որ դանիրվում է Հունաստանում: Ունի 2898 մետր բարձրություն, որտեղ բնակվում էին 12 աստվածներ Զեսը, Հերան, Աթենաւը, Աֆրոդիտեն և ուրիշներ:

«Կամ կուզես թոցնեմ, հանեմ Օլիմպիոս,

Որ նեկտար ըմպես, ճաշակես ամբողու», Հովին Թումանյան, հ 2, 94

**ՕՄՓԱԼԵ**, Հուն., — Լիդիայի թագուհին, որի մոտ, ըստ դիցաբանության, իբրև ստրուկ աշխատում էր Հերակլեսը: Ծանր օրեր ապրեց Հերոսը նրա մոտ թագուհին կանացի շորեր էր հագցնում նրան և ստիպում, որ իր աղախինների հետ կատարի կանացի աշխատանք: «Հերոսին Օմփալեն հազվադեպ էր բաց թողնում իր պալատից», Կուն, 227

**ՕՄՓԱԼՈՍ**, Հուն.: — Ապոլլոնի տաճարում գտնվող կլոր քարը Դիցաբանության մէջ այդ մասին ասվում է, որ

այդ քարը դտնվում էր երկրի ճիշտ կենտրոնում, Զեսը ցանկանում էր իմանալ երկրի կենտրոնը: Այդ նպատակով նա երկրի երկու հակագիր ծայրերից բաց թողեց երկու արժիվ: Արժիվները սրբնթաց սավառնելով՝ միմյանց հանդիպեցին Դելփիքում, որտեղ և հիմնվեց Ապոլլոնի տաճարը, իսկ արժիվների հանդիպման կետը կոչվեց երկրի պորտ: «Օրեստը վերջապես հասավ սրբազան Դելփիք և նստեց Ապոլլոնի տաճարում Օմֆալոսի մոտ», Կուն, 584

**ՕՅՆԵՌՈՍ**, Հուն, — Դեյանիրայի հայրը: Բատ դիցարանության հունական շատ երիտասարդներ ցանկացան տիրանալ Դեյանիրային: Փեսացու ընտրելու նպատակով կազմակերպվեցին մրցախաղեր, որտեղ հաղթանակ տանողը կստանար Դեյանիրայի ձեռքը: Մրցությանը մասնակցեց նաև գետի աստված Արելոսոսը: Եվ երբ մրցակցության մեջ մասավ Աքելոսոսը, մրցովները հեռացան առողարեղից, մնաց միայն Հերակլեսը: Մրցության պահին Աքելոսոսը բամահեց Հերակլեսին: Բայց շուառվ դգաց իր մրցակցի ուժը և օձի կերպարտնք ստացավ: Այդ ժամանակ Հերակլեսն ասաց «Դեռ օրորոցումն եմ օձերի հետ կռվել սովորել»: Եվ պարտության մատնեց Աքելոսոսին: «Պարտված է Աքելոսոսը, և Օյնեոսը Դեյանիրային կնության մվեց Զեսի մհծագոր զավակին», Կուն, 224

**ՕՅՍՏՐՈՍ**, Հուն, — Խելազարության աստված: Բատ դիցարանության, երբ Մեդեան սպանում է իր որդիներին, Օյստրոսը զահերը ձեռքին, օձերը լժած երկանվի վրա երևում է ողբերգության վայրում, Կուն, 348.

**ՕՍԻՐԻՍ** (Օղիրիս), Հուն, — Եգիպտական վեհապույն աստված: Բատ դիցարանության լրջեց ողջ Խայր յամարը և Երկրի վրա հաստատեց քաղաքական օրենքներ: Մեն Օսիրիսը .. կսիրես. թող այդ նոտդյությունը» ԱՅ Եօրաս 25:

**ՕՅԿԻԱՆ**, Հուն, — Հին հունական կղուում հաւկացվել է ամեն ինչի սրգասավորողը: Ավելիունն ուներ 300 որդիքեր և նույնքան գումարեր, որոնք կոչվում էին օլիանիդներ «Տիտան Օմիլյանոսը... առտվածուհի Բուտիսը լույս աշխարհ քերին բոլոր զետերը», Կուն, 19—20.

**ՕՎԿԻԱՆԻԴՆԵՐ,** Հուն., — Օվկիանոսի և Թետիսի  
դուստրերը, հավերժահարսեր, Կուն, 19

**ՕՐԱԿՈՒԼ,** Լատ., — Պատգամախոս, Դիցարանության  
մեջ ասվում է, որ սա կապ էր պահպանում աստվածների և  
մարդկանց միջև։ Զևսի տաճարի Դողուա սուրբ ժառի տերևների  
սոսափյունից գուշակում էր գալիքը, Ա. Ը.

**ՕՐԳԻԱ,** Հուն., — Բաքոս աստծու պատվին կազմա  
կերպված գաղտնի կրոնական ժեսեր։ Փխթ — Անզուսպ կերու  
խումով և կրքոտ տեսարաններով լի զվարճություններ,  
Մ Հ «Անցել է Էրկու շաբաթ Քյազիմ քեկի մոտ տեղի ունե-  
ցած օրդիալից» Շիրվանզոդե, Քառու,

**ՕՐՍԱԴՆԵՐ,** Հուն., — Հավերժահարսեր։ Բատ դիցա-  
րանության բակվում էին լեռներում, ձորերում, գալարա-  
գեղության մեջ։ Օրեադները համարվել են պտղաբերության,  
հոգս ու խնամք տանող գեղեցկության ու նազանքի հավերժա-  
հարսեր «Օրեադները նրա վարթամ զանգուրներին դարնա-  
նային բուրումնավետ ծաղիկների պատկ դրին», Կուն, 131

**ՕՐԵՍԹ (Օրեստ),** Հուն., — Ազամեմնոնի ու Կիթեմ-  
նեստրալի որդին։ Բատ դիցարանության Սգամեմնոնը Տրոյա-  
յից հաղթանակով նոր էր վերադարձել, երբ նրա կինը՝ Կիթեմ-  
նեստրան, իր սիրեկան էգիսթի հետ դավադրաբար սպանեց  
Ազամեմնոնին։ Ազամեմնոնի որդին Օրեսթը, վրիժառու եղավ  
և սպանեց իր սորն ու Լգիսթին։ Մոր ուրվականը խնդրեց  
էրինիներին՝ վրիժառության աստվածուհիներին, մայրասպան  
Օրեսթին հանգիստ ու դադար շտալ։ Օրեսթը խոշտանգված և  
էրինիներից ալասված գնաց Ասկոլոնի տաճարը, որպես զր  
ազատվի նրանց հետապնդումից։ «Բատ իմ պայմանի, ես պետք  
է մասնակցեի հույն պետական թատրոնի ներկաւացումներին՝  
Օրեսթի դերում», Վ. Փ., 6 1, 233

**ՕՐԹՐՈՍ,** Հուն., — Էրիդնայի և Տիփոնի որդին, Դիցա-  
րանության մեջ պատկերվել է որպես երկգլխանի շուն, որ  
պահպանում էր Գերիոնի նախիրները։ «Հազիվ էր հասել կղզուն,  
երբ երկգլխանի ահեղ Օրթրոս շունը հաշելով նէտվեց հերոսի  
վրա» Կուն 212

**ՕՐԻԹԻԱ,** Հուն., — Էրեքթևսի դուստրը։ Դիցարանու-

թյան մեջ ասվում է, որ Օրիթիային սիրահարվեց Թորեասը, բայց փոխադարձ սեր շտացավ նրանից: Թորեասը առևանգ' ց նրան, և նրանց սիրո գգվանքից ծնվեցին Զեթես ու Կալոյա երկորյակները: Այս զավակները իրենց հոր նման թևակ'որ դարձան և շատ սիրանքներ կատարեցին: «... Օրիթիան դարձավ Թորեասի կինը», Կուն, 251

ՕՐԻՈՆ, Հ ուն, — Պոսեյդոնի որդին, առասպելական որսորդ, քաջ ու գեղեցիկ մի պատանի, Արշալույս աստվածուհու սիրեկանը: Ըստ առասպելի Պոսեյդոնը որդուն շնորհել էր ծովի ալիքների վրա շրջելու կարողություն: Սստվածները հալածում էին Օրիոնին, որովհետև նա վայելում էր Արշալույս աստվածուհու սերը: Արտեմիս աստվածուհին խանդից սպանեց նրան: Մի այլ վարիանտում ասվում է, որ Օրիոնը կուրացավ և այդ վիճակում շրջեց շատ երկրներ ու հասավ Հելիոս աստծուն ենթակա երկիրը: Այստեղ արեգակի ճառագայթները վերականգնեցին նրա տեսողությունը: Երկնային համաստեղություններից մեկը կոչվել է նրա անունով: «. Երջում է երկնքում և պիշտայում Օրիոնին», Հի 360

ՕՐՍԻԼՈՔ, Հ ուն, — Կրետեի արքա Իդոմենևսի որդեգիրը, որը, ըստ դիցարանության, խիստ արագընթաց էր: Ողջ Կրետեում այդ բանում նրան մրցակից շկար: «Փախագաղտնի, քանզի այնտեղ սպանել եմ Օրսիլոքին՝ Իդոմենևսի որդուն արի», որ ընդարձակ Կրետեում արագությամբ իր ոտքերի գերազանցում էր բոլորին», Հի 183

ՕՐՓԵՈՍ, — Էագրոսի և Մուսա Կալիոպեի որդին, Էվրիդիկե հավերժաբարսի ամուսինը: Ըստ դիցարանության Օրփեոսի և Էվրիդիկեի ամուսնական կյանքի քաղցրությունը երկար շտեհց: Հավերժաբարսը ընկերների հետ ծաղիկներ քաղելիս չնկատեց օձին և ոտքը դրեց վրան: Օձը խայթեց նրան, Օրփեոսը երկար ողրաց իր սիրասուն կնոջ մահը և վշտարեկ երգերով հմայեց գեղահրաշ բնությունը, Օրփեոսը վճռեց գնալ Հաղեսի աշխարհը և խնդրել կնոջ վերադարձը: Նա իջավ անդքրշիրիմյան աշխարհը և կանդ առավ Մտիքս գետի ափին: Այդ գետի վրա իր նավակով երևաց Քարոնը, որը մեռելների հոգիներն էր տեղափոխում: Օրփեոսը խնդրեց Քարոնին, որ

իրեն տեղափոխի գետի մյուս ափը, որպեսզի հնարավոր լինի Հաղեսի մոտ գնալ: Քարսնը մերժեց: Հուսահատված Օրփիեռը սկսեց իր գերող հնչյուններով գայթակղել Քարոնին: Եվ երբ նրա ականջին հասան գերող հնչյունները, նա նավակը ետքերեց և Օրփիեռին տարավ գետի մյուս ափը: Հաղեսի աշխարհում Օրփիեռի նվազի ազդեցության տակ ամեն ինչ անշարժության էր մատնվել: Հաղեսը համաձայնեց վերադարձնել Էվրիդիկեին, բայց պայմանով, որ մինչև լույս աշխարհ՝ դուրս գալը Օրփիեռը ետ չպետք է նայեր իր կնոջը: Կինը որպես մի ուրվական հետևում էր նրան: Օրփիեռը անձկությունից անկարող եղավ ետ չնայել և շղիտել իր կնոջը: Նա ետ նայեց, և նույն վայրկյանին էվրիդիկեն անհետացավ: Հուսահատ Օրփիեռը դուրս եկավ Հաղեսի աշխարհից: Վաղ դարնանը նա իր նվազի հնչյուններով գայթակղում էր քնությանը, և մեծ երգիչը ինքնամոռացմամբ երգում էր: Նրա մոտ եկան բաքոսուհիները ու նրան քարկոծ անելով մահացրին: «Բաքոսուհիները սպանում են Օրփիեռին», «Եթե խնդիրը վերաբերում է երաժշտությանը, Օրփիեռը այս րոպեին պետք է յուր նախանձից դեղնած լինի», ՅՈ Երբաս, 99

ՕՐՓՈ, ՀՈՒՆ, — Sh'ա Օւրիոս

ՕՐՔՈՒՍ, ՀՈՒՆ, — Մեռելների առասպելական թագավորության հոռմեական անունը, Շիլեր, Բալլադներ, Երեվան, 1957 թ., 98.

## Ֆ

ՅԱԼՅՈՒՍ, ՀՈՒՆ, — Անտառների ու դաշտերի աստված, հոտերի ու հովիվների պահապան, M. C

ՅԱՅԵԹՈՆ, ՀՈՒՆ, — Sh'ա Փայերոն

ՅԱՅԵԹՈՒՍԱ, ՀՈՒՆ, — Արեգակի և Նեյերանի դուստրոր, որը իր կամպետոն քրոջ հետ արածեցնում էր /ր հոր նախիրն ու հոտեր, M. C

ՅԱՈՒՆԱ, ՀՈՒՆ, — Անտառների ու դաշտերի աստվածուհիներ:

**ՖԱՎՆ,** հուն., — Դաշտերի ու անտառների աստված:  
Հստ դիցարանության հովանավորում էր հոտերին և սիրում էր  
կատակել մարդկանց հեա: Հետագայում, ինչպես նշվում է  
դիցարանության մեջ, ֆավնների թիվը շատացավ, նրանք  
սիրո արկածներ էին ստեղծում նիմֆաների հետ: «Ֆավն ու  
նիմֆեր, ու սրինգ, — երգ և տավիդ քաղցրածայն», Ե. Զ. 1. 2:

**ՖԵԱ,** հուն., — Բարու կամ շարի աստված, Մ Հ.:

**ՖԵԱԿՆԵՐ,** — *Ske'u* փեակներ:

**ՖԵԲ** (Քերոս), — *Ske'u* Ապոլլոն:

**ՖԵԴԻՏԱ,** հուն., — *Ske'u* Թետիս:

**ՖԵՇԱՐԱ,** հուն., — Սինոս թագավորի դուստրը, Թեսևսի  
կինը: Հստ դիցարանության սա շար խարդախ էր, սիրահարվել  
էր իր խորթ որդուն և անձնասողան եղավ վերջինիս մահից  
հետո նրա սիրուն անարժան լինելու կարուից: «Երևացին  
Ֆեդրան, Պրոկրեն և գեղեցկուհի Արիադնեն ...», ՀՈ, 153

**ՖԵԼԻՏԻՌՈՍ,** հուն., — Ողիսևսի հավատարիմ խաշնա-  
րս ծ., ՀՈ 285:

**ՖԵԼԻՑԻԱ,** հուն., — Հռոմեական աստվածուհի, Հոգա-  
ցողության և բախտավորության աստվածուհի: Իր էությամբ  
սա Ռոտենու և Ֆորտունային, Ա. Յ.:

**ՖԵՄԵԴԱ,** հուն., — Ռւրանոսի և Գեայի սրդին, մոյրա-  
ների (տես սովորակեր) ժայրը: Արդարության աստվածուհի:  
Դիցարանության մեջ պատկերված է մի ձեռքում սուր, մյու-  
ս է կշեռք, աշքերը շորով ծածկված, Ա. Յ.:

**ՖԵՆԻՔՍ,** հուն., — Սուրբ թոշուն: Հստ եղիպտական  
դիցարանության Ֆենիքսը յուրաքանչյուր 500 տարուց հետո  
վերադառնում էր Ծգիպտոս, ուր և նրան այրում էին, Բայց նա  
նորից հարություն էր առնում մոխիրներից և 40 օր հետո  
թռչում էր դեպի Հնդկաստան: Հնդարձակ բացատրությունը  
տես և յօւնիկ բառի տակ: «Աթենաս դիցուհին, բոսորագույն  
ամպերով պարուրված, իջավ մարտնչող հույն հերոսների մոտ  
և Ֆենիքսի կերպարանք առած սկսեց քաջալերել նրանց»,  
Կուի 445

**ՖԻԼԻՑԻԱ,** հուն., — Երցարանության մեջ հասկացվել

**Է որպես Յուսլիտերի պատվին կազմակերպված քրմերի խումբ՝**  
**20 հոգուց բաղկացած, որը կրում էր Ֆիլիցիա անունը:**

**ՖԹԱ ԿԱՄ ՊՏԱ, և գի պ տ ,— Ծգիպտական աստ-**  
**ված, Դիցաբանության մեջ պատկերված է մեծ որովայնով,**  
**մեծ բերանով, մեծ ականջներով և մեծ աչքերով մարդու կեր-**  
**պարանքով։ Համարվել է լույսի, կրակի և աշխարհը ստեղծող**  
**աստվածություն, Մ Հ**

**ՖԻԴԵՍ, լ ա տ ,— Հավատարմության աստվածուհի:**  
Նրա պատվին, ըստ դիցաբանության, տաճար էր կառուցված,  
Նրա անդրին պատկերում է մի երիտասարդ կին՝ հասկի  
փնջով և պտուղներով։

**ՖԼՈՐԱ, հ ու ն ,— Ծաղկեների և գարունի ստվա-**  
ժուհի, Ո Հ

**ՖՈՑԻ-ԲՈՍ, հ ու ն ,— Տես Սպոլլոն**

**ՖՈՐԲԱՆՏ, հ ու ն ,— Հերոս, Ըստ դիցաբանության**  
Ֆորրաստը գնաց իոդոս կղզին և կղզին մաքրեց օձերից։ Այն-  
տեղ ամուսնացավ արքայի քրոջ Հորմոնիայի հետ։ Նրանց  
սիրո գգվանքից ծնվեցին Երկու զավակ Ավգին և Աքտորի։  
Ֆորրաստը ավագակություն էր անում այն ճանապարհի վրա,  
որը տանում էր դեպի Դելիֆիք, Ա Հ

**ՖՈՐԿԻՆԱ, լ ա տ ,— Հոռմեական աստված։ Դիցաբա-**  
նության մեջ Ֆորկինան համարվել է օջախի և հացագործու-  
թյան աստվածուհի։ Նրա պատվին կատարվում էին տոնակա-  
տարություններ, Ա Հ.

**ՖՈՐՏՈՒՆԱ, լ ա տ ,— Բախտի, դիսլվածի և ճակատագրի**  
աստվածուհի։ Հունական դիցաբանության մեջ սկզբում ճա-  
սաշվել է որպես հողագործության աստվածուհի։ Պատկերված  
է գլուխը կապած գնդի կամ սկիճի վրա կանգնած, մի ձեռքում  
ստահում է զեկը, մյուսում առատության եղջյուրը։ Ղեկը նշա-  
սակում է, թե նա զեկավարուա է մարդու բախտը, եղջյուրը  
բարեբախտության նշան է, Կուն, 29

**ՖՈՒՐԻԱ, հ ու ն ,— Անեծքի և վրեժինդրության սոս-**  
կալի աստվածուհի, խղճահարություն ներշնչող, ՅՈ Եւ թաս,  
211։

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ա. Կուն — Հին Հայաստանի լեզենդներն ու առա պելի բրը Երև Երևան, 1956թ.
2. Հյուրմյուղյան, Սիմիթս Բլանգ — Առձեռն դիցարանական կամ տուառպելական վեպք զղից և զղյուցազանց, Վենետիկ 1867թ.:
3. Հր Մհարյան — Հայոց անձնանունների բառական Երևան 1942-1944, 1946, 1948թթ., համ. արք, գր. գր.
4. Միքայել Յ. Բատիկյան — Հեղեղն զիք, Աթենք, 1936թ.
5. Մայս. Հարությունյանը — Բացատրական բառդիրք օտարակի բառերի և օտարազիր բառերի և գարձագածքների, որոնք զործածական են հայոց գլականության մեջ, Ալեքսանդրապոլ, 1912թ.:
6. Հ մերոս — Իլիական Երևան 1955թ. (թարգմ և մալասպ Հայեա, ձումյանի):
7. Հոմերոս — Ոլիսական Ելուսն 1954թ. (թարգմ Ալիմոն Երքաշարյանի):
8. Հույն ողբերգակներ Երևան 1950թ. (թարգմ Համազար Համբարյանի):
9. Ա. Ս. Պուշկին — Երկեր, Երևան 1956թ. (Հայերեն, Հինգ առ բով):
10. Մուրխաթյան — Հին Հունական դրականություն Թիֆլիս, 1922թ.
11. Ն. Ճիվանյան — Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցարանական հատուկ անվանց Կ. Պոլիս, 1879թ.:
12. Առաքել Առաքելյան — Հումեռ կան գրականության պատմ Վլյուչ Երևան 1956թ.:
13. Ա. Տ. Մալիսայան — Հայերեն բացատրական բառարան Ելուսն 1944թ.
14. Շիլեր — Բալլադներ Երևան, 1957թ. (Հայերեն)
15. Լարուս — (փոքր բառարանը):
16. Մուրացան — Գեորգ Մարգարետունի Երևան 1939թ.
17. Վահրամ Փափալյան — Հետո դարձ հայացք Տ. I և II Երևան 1956, 1957թթ.
18. Վահան Տերյան — Իանաստեղծությունների լիակատակ ժաղ վահան Երևան 1940թ.
19. Եղիշե Զարենց — Հնագիր Երկեր Երևան, 1954թ.:

- 20 Դավիթիկ Փատկանյան — Երկեր Երևան, 1954թ.,
- 21 Բաֆֆի — Սամվել, Երևան, 1940թ.և և ԱԼ, IV V, VII, 1955—56թթ.
- 22 Միքայել Նալբանդյան — Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 1945թ.,
- 23 Նախրի Զարյան — Սիհառորյակ, Երևան 1959թ.,
- 24 Խաչատրյան Արովյան — Վերք Հայաստանի Երևան,
- 25 Դանիել Վարուժան — Երկեր Երևան, 1946թ.
- 26 Հովհաննես Թումանյան — Երկեր, հ. 1, II, Երևան, 1958թ.,
- 27 Հովհաննես Հովհաննիսյան — Երկերի ժողովածու, հ. 1, Երևան 1937թ.,
- 28 ՅՌ Երթան (թարգմ. Ստ Կոհեցյանի), Երևան 1961թ.,
- 29 Էնցիկլոպեդիկ հայերեն տարբերակ, Մոսկվա 1954 թ.
- 30 Միֆոլոգիկ հայերեն տարբերակ, Լենինգրադ 1959 թ.
- 31 Գի դը Մոպասան — Մի կյանք (թարգմ Ա. Տայեցի), Հայպետրուտ, Երևան, 1951թ.,

# Գալուստ Մանուկի Գալսայան

## Դիցաբանական անունների և դարձվածքների համառոտ բացատրական բառարան

Խմբագիր Ա. Գ. Յամակյան  
Գեղ. խմբագիր Թ. Վ. Մագմանյան  
Տեխն. խմբագիր Ս. Ն. Էավրյան  
Վերստուգող սրբագրիչներ Լ. Ս. Հովհաննիսյան, Ն. Կ. Փանոսյան

Պատվեր 143

Տերած 15000

Համ ձնված է արտադրության 28/VII 1966թ Ստորագրված է տպացրության 29/VII 1966թ թուղթ հ. 1 84×108<sup>1/32</sup>, տպագր 9,75  
լում. =պայմ. 8,0 մամ. հրտա 6 6 մամ  
Գինը 34 կոպ.

ՀՍԽՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի պետական  
կոմիտե պոլիցիաֆ արդյունաբերության զինադար

գտրչության պոլիցիաֆ կոմիտեն,

Երևան, Տեղյան 91:

